

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

բանասիրական գիրք. թեկնածու, ԳՀԸ

«ԱՐՏԵՐԿՐԻ ՀԱՅ» ԻՍԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԻ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց Մեծ եղեռնին, հայուլթյունից Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի պարավելուն հաջորդող ժամանակաշրջանում ձեւավորվեց հայկական սփյուռքը՝ որպէս բացառիկ մի երեւույթ հայոց պատմութեան մեջ¹: Հայրենազրկումն ու սփյուռքի ձեւավորումը արմատապէս փոխեցին մեր ժողովրդի կենսակերպը, ազգային կյանքի կազմակերպումը, շրջեցին հայուլթյան բնականոն զարգացման ընթացքը, ինչպէս նաեւ անջնջելի հետք թողեցին նրա հոգեբանութեան վրա: Նոր զարգացումները որոշակի ազդեցութիւն ունեցան նաեւ լեզվական իրողութիւնների, մասնավորապէս հայերենի բառապաշարի վրա: Թեպետ «արտերկրի հայ» իմաստն արտահայտող կազմութիւնները՝ հայկական մամուլի էջերում սկսել են երեւան գալ հատկապէս ժԹ. դարի վերջերից, սակայն հատուկենտ նմուշներ էին եւ ոչ ընդհանրացած: Ընդհանրացումը տեղի ունեցավ ավելի ուշ, երբ կայունացան հայկական համայնքները, իսկ հայերեն լեզվամտածողութեան մեջ հաստատվեց «այսինչ երկրի հայ» հասկացութիւնը, որի իրացումը հայ վերջնաբաղադրիչով բազմաթիվ բարդ բառերի ստեղծումը եղավ: Այդ բառերը յուրահատուկ իմաստային խումբ են կազմում:

Գրական հայերենի երկու ճյուղերում «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորները լայնորեն տարածվեցին հատկապէս Ի. դարի կեսերից սկսած: Հայ ժողովրդի պատմական դաժան ճակատագրի թելադրանքով

¹ Հայկական գաղթավայրեր հայտնի են վաղ միջնադարից, երբ հայերը տարբեր հանգամանքների թելադրանքով հաճախ զանգվածաբար հեռացել են հայրենի երկրից, կամ էլ բռնագաղթների հետեւանքով դուրս քշվել բնօրրանից՝ նոր կյանք սկսելով օտար երկրներում, սակայն սփյուռքը, իբրեւ իրողություն, տակավին գոյություն չունէր:

ստեղծված եւ հայութեան տարբեր հատվածների ներկայացուցիչների անվանող բառերի ներկայացումը հայերենի՝ մասնավորապես ծավալուն բառարաններում բառարանագրական ուշագրավ խնդիր է, դրանց բառարանային ճիշտ եւ որակյալ մշակումը՝ անհրաժեշտություն:

Հետազոտության առարկա դարձած բառերն աշխարհաբարի, հայերենի հատկապես նրա նոր եւ նորագույն փուլերի իրողություններ են, ուստի դրանց բառարանագրական քննությունը կիրականացնենք հայերենի (արեւելահայերենի եւ արեւմտահայերենի) բառարանների շրջանակներում: Այս անգամ կուսումնասիրենք միայն հայերեն միալեզվյան բանասիրական (լեզվաբանական) բառարանների ընձեռած նյութը:

«Արտերկրի հայ» իմաստային այս խմբի միավորների արձանագրումն սկսվել է նախ հայերենի թարգմանական բառարաններում, դեռեւս Ի. դարի տասական թվականներին, այսինքն՝ «նախասփյուռքյան»² շրջանում: Արեւելահայ իրականության մեջ՝ Հ. Դադբաշյանի հայ-ռուսերեն բառարանում³, հանդիպում են եգիպտահայ, թ(ու)րքահայ, կովկասահայ, պարսկահայ, ռուսահայ, փառնահայ կազմությունները, արեւմտահայ իրականության մեջ՝ Գ. Լուսինյանի եւ Կ. Բասմաջյանի աշխարհաբար հայերեն-ֆրանսերեն բառարանում⁴, փոքր-ինչ տարբեր բառակազմով եւ ավելի շատ՝ ամերիկահայ, անգլիահայ, թրքահայ, հնդկահայ, հունգարահայ, պարսկահայ, պուլկարահայ, ռումանահայ, ռուսահայ եւ փառնահայ:

Հայերեն միալեզվյան բառարաններում իմաստային այս խմբի միավորները թարգմանականներից բավական ուշ են գրանցվել⁵ (հայ իրականության մեջ միալեզվյան բառարաններ ընդհանրապես ավելի ուշ են հրատարակվել, քան թարգմանականներ):

Հայերեն միալեզվյան բառարաններում «արտերկրի հայ» նշանակող բառերի արձանագրումն սկզբնավորել է Ստ. Մալխասյանցը՝ իր «Հայերէն

² Եզրույթի մասին տես Վ. Մատթէոսեան, Հայերը Արժանիքի մէջ (մեկնաբանութեան փորձ մը). «Ինքնութեան հարցեր» տարեգիրք, Երեւան, 2002, էջ 124-126:

³ 3. Դադբաշեան, Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն, Թիֆլիս, 1911:

⁴ Գ. Լուսինեան, Կ. 3. Բասմաջեան, Առձեռն բառարան հայերէն աշխարհիկ լեզուէ ֆրանսերէն, Կ. Պոլիս, 1915: Ոչ «արտերկրի հայ» իմաստով այս բառարանում արձանագրվել են նաեւ լատինահայ եւ ֆրանսահայ բառերը:

⁵ Արեւմտահայ աշխարհաբարի բացատրական առաջին բառարաններից մեկում, որ լույս է տեսել հիշյալ շրջանում, խնդրո առարկա բառերից առհասարակ չկան (տես Ս. Գաբամաճեան, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910): Այդպիսի չկան նաեւ հիմնականում «Առձեռն բառարանի», Ս. Գաբամաճյանի եւ գավառական բառարանների նյութի հիման վրա կազմված եւ ավելի ուշ տպված արեւմտահայերէն ուսումնական բացատրական բառարանում (տես Վ. Գէորգեան, Առձեռն բառարան հայերէն լեզուի, Բեյրութ, 1934):

բացատրական բառարանում»⁶ զետեղելով այդ կարգի մեկ տասնյակ բառ: Դրանք բառերը կազմվել են «երկրանուն/տարածաշրջանի անուն+հայ» բառակազմական կաղապարով: Մալխասյանցը հիմնականում ընտրել է հայկական այն գաղթավայրերի եւ համայնքների ներկայացուցիչների անունները, որոնք նկատելի դերակատարում են ունեցել հայության քաղաքական, տնտեսական, հոգեւոր-մշակութային եւ ազգային կյանքում առհասարակ: Դրանք հայության այն հատվածներն են, որոնք անցյալում կամ բառարանը կազմելու ժամանակաշրջանում հայաշատ եւ ազդեցիկ են եղել, իսկ նշանակիչ բառերը՝ քիչ թե շատ գործածական:

Մալխասյանցի ընտրած բառերը կբնենք առանձին-առանձին (այբբենական կարգով, ինչպես բառարանում է), քանի որ հաջորդ սերնդի բառարանագիրները հաշվի են առել սրանց բառարանային մշակման առաջին փորձը եւ մեծապես օգտվել դրանից: Այսպես:

Ամերիկահայ: Նշվում են բառի ձեւաբանական արժեքները՝ ածական եւ գոյական, որոնք հաստատվում են ինքնաշեն նախադասություններով⁷. «Ամերիկահայ գաղութը իւր մայր երկիրը չի մոռանում: Ամերիկահայերից մի քանիսը Ամերիկայի հպարտ քաղաքացիներ են դարձել» (հ. 1, էջ 67): Սակայն տրված է միայն մեկ իմաստ՝ «Ամերիկայում ապրող հայ», որ վերաբերում է գոյականի արժեքին: Ամերիկահայ ասելով՝ հայերեն խոսող հանրությունը հասկանում է, որ խոսքը Ամերիկայի Միացյալ Նահանգների մասին է (ոչ Ամերիկա մայրցամաքի կամ աշխարհամասերից մեկի), բայց եւ այնպես ճշգրիտ կլինեն «Ամերիկայի Միացյալ Նահանգներում/ԱՄՆ-ում ապրող հայ» ձեւակերպումը:

Անգլիահայ: Ի տարբերություն ամերիկահայ-ի՝ նշվում է միայն ածականի արժեք, սակայն համանման բացատրությունը գոյականական է՝ «Անգլիայում բնակող՝ Անգլիային հպատակ հայ, Անգլիայի քաղաքացի հայ»: Այդ է հաստատում նաեւ բառի գործածությունը ցուցադրող նախադասությունը՝ «Անգլիահայերի թիւը մեծ չէ» (հ. 1, էջ 100): Իմաստային մեկնաբանությունն ընդգրկուն է՝ Անգլիայի բնակիչ, հպատակ եւ քաղաքացի: Այս վերջիններից մեկը լիովին կարող էր բավարարել. կա՛մ հպատակ, կա՛մ քաղաքացի:

Եգիպտահայ: Նշվում է միայն գոյականի արժեք՝ «Եգիպտոսում բնա-

⁶ ՀՔԲ, հ. 1-4, Երեւան, 1944-45 (այսուհետեւ կնշվեն հատորը եւ էջը):

⁷ Այդպես է նաեւ մյուս բառերի դեպքում, սա ընդհանրական հատկանիշ է ամբողջ բառարանի համար:

կող հայ» բացատրությունը. «Նա այստեղացի չէ, եգիպտահայ է» (Հ. 1, էջ 549): Այս նույն բացատրությունը անգլիահայ-ը ածական է դիտվել: Կասկած չկա, որ եգիպտահայ-ն ունի նաեւ ածականի արժեք, ինչպես՝ եգիպտահայ մամուլ, դպրոց, թեւ:

Թուրքահայ: Մալխասյանցը հղում է թիւրքահայ հնչյունական տարբերակին, այդպիսով նախապատվություն տալով երկրորդին⁸: Թիւրքահայ-ը բառարանագիրը բացատրում է այսպես՝ «Թիւրքիայում բնակող հայ. Թիւրքահայատակ հայ»: Հետաքրքրական է «այսինչ երկրի հայատակ» իմաստային բաղադրիչի ներմուծումը, որ տեսնում ենք նաեւ ռուսահայ-ի դեպքում: Փաստորեն դա միտումնավոր կիրառվել է հայություն երկու մեծ հատվածների ներկայացուցիչ նշանակող բառերի կապակցությամբ միայն: Ձեւաբանական արժեքները (ած. եւ գոյ.) ներկայացվում են ոչ միայն ինքնաշեն նախադասությունների, այլեւ բառակապակցությունների միջոցով. «Խօսակցութիւնից երեւում էր, որ թիւրքահայ էր: Թիւրքահայոց լեզուն եւ գրականութիւնը: Մեր թիւրքահայ եղբայրները: Թիւրքահայերի թիւն այժմ պակասել է» (Հ. 2, էջ 109), եւ այդ մոտեցումը դրսեւորվում է ուրիշ բառահոգվածներում եւս:

Թուրքահայ / թիւրքահայ տարբերակներն արտահայտում են նաեւ «արեւմտահայ» իմաստը, սակայն բառարանն այդ մասին ոչինչ չի ասում⁹ (հարցի լուծումը տվել են հետագա բառարանագիրները):

Լեհահայ: Բացատրվում է որպես «Լեհաստանում բնակող հայ», նշվում են խոսքիմասային արժեքները, սակայն բառի գործածությունը ցուցադրող նախադասությունները կրկին ներկայացնում են միայն գոյականի արժեքը՝ «Հարիւր հազարաւոր լեհահայեր լեհացան: Լեհահայերն ունէին իրենց ազգային դատարանը» (Հ. 2, էջ 193):

Կովկասահայ: Այս բառը մյուսներից տարբեր է. առաջին բաղադրիչը երկրանուն չէ, այլ նոր ժամանակներում Ռուսաստանի գերիշ-

⁸ Թրքահայ տարբերակը հիշատակվում է բառարանի թրքա... բառահոգվածում: Մալխասյանցը պարզաբանում է, որ թուրք բառից կանոնի համաձայն սղվում է ձայնավորը, եւ այդ արմատից բարբառներում եւ գրական լեզվում կազմվել են մի շարք բառեր՝ թրքական, թրքահայ, թրքասեր, թրքերեն եւ այլն: Ապա ավելացնում է. «Աւելի յարմար է գործածել թուրքա- եւ թիւրքա- ձեւերով համապատասխան բարդութիւնները, չշփոթելու թրիք բառից կազմված բարդութիւնների հետ» (հ. 2, էջ 132): Արդի արեւելահայերենում հիմնականում այդպես է՝ թուրքական, թուրքերեն, բայց եւ հանդիպում են թրքաբարո, թրքահաճ եւ այլն, համահայերեն է թրքուի-ն: Մեր կարծիքով զուր մտահոգություն է:

⁹ Բառարանն արեւմտահայ գլխաբառ առհասարակ չունի, թեպետ բառը մի քանի տասնամյակ գործածության մեջ էր ինչպես արեւելահայերենում, այնպես էլ արեւմտահայերենում:

խանության ներքո հայտնված մի մեծ եւ ազգային կազմով խայտաբղետ տարածաշրջանի՝ երկրամասի անուն: ԺԹ. դարի առաջին տասնամյակներից տարածաշրջանի մեջ մտնում է Արեւելյան Հայաստանի հիմնական մասը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարող ենք ասել, որ Կովկասահայ-ը լիովին չի համապատասխանում «արտերկրի հայ» իմաստային խմբի բնութագրին: Մյուս կողմից էլ, սակայն, համապատասխանում է, քանի որ «Կովկասահայ» են կոչվել, օրինակ, Թիֆլիսի կամ Հյուսիսային Կովկասի հայկական բազմաթիվ համայնքների ներկայացուցիչները (իսկ դրանք երբեւէ Հայաստան չեն եղել):

Կովկասահայ-ը ներկայացվում է երկու իմաստով (եւ արժեքով): Առաջինը գոյականի իմաստն է՝ «Կովկասում բնակող հայ (հակադրութեամբ արեւմտեան հայերին¹⁰)»: Գործածության նմուշը պատմական ճիշտ տեղեկություն է հաղորդում. «Տասնևիններորդ դարի երկրորդ կիսում Կովկասահայերի միասոր կենտրոնը Թիֆլիսն էր» (հ. 2, էջ 473): Երկրորդը ածականի իմաստն է՝ «Կովկասահայերին յատուկ, վերաբերեալ». «Կովկասահայ գրականություն»: Ավելորդ չենք համարում նշել, որ ինքնաշեն նախադասությունները հաճախ բառի կիրառության սոսկ ցուցադրումը չեն, այլ ճանաչողական օգտակար արժեք ունեն:

Հնդկահայ: Բացատրվում է նույն կերպ՝ «Հնդկաստանում բնակող հայ». «Հնդկահայերը մի ժամանակ մեծ ու հարուստ գաղութ էին կազմում» (հ. 3, էջ 117): Սակայն բառի մեջ միայն գոյականի արժեք է նկատվել:

Հունգարահայ: Ներկայացվում է միայն որպես գոյական՝ «Հունգարիայում բնակող հայ». «Հունգարահայերը մոռացել են հայերէն լեզուն: Նա երկար ապրել է հունգարահայոց մէջ» (հ. 3, էջ 137): Ածականի արժեքը կրկին անտեսվել է:

Ռումանահայ: Ի տարբերություն նախորդների՝ հնդկահայ-ի եւ հունգարահայ-ի, բառը երկարժեք (ած. եւ գոյ.) է համարվում: Իմաստը՝ «Ռումանիայում կամ Ռումինիայում վերաբնակված հայ», վերաբերում է միայն գոյականին, այնինչ նմուշօրինակները՝ երկուսին էլ. «Նա ռումանահայ է: Ռումանահայ գաղութն ուղարկել էր ներկայացուցիչ այս փոսին: Պատմությունը գրված է ռումանահայոց քարտուով» (հ. 4, էջ 164):

¹⁰ Արեւմտյան հայեր բառակապակցությունը ցույց է տալիս, որ Մալխասյանը պատահաբար չի հրաժարվել արեւմտահայ-ը գլխաբառ դարձնելուց: Բառարանագիրը Կովկասահայ-ի իմաստը ներկայացնելիս էլ չի գործածել արեւելահայ բառը: Ակներեւ է, որ սա սկզբունքային մոտեցում է:

Ռուսահայ: Կրկին ներկայացվում է երկու իմաստով եւ արժեքով, առաջինը՝ գոյականի՝ «ռուսահայատակ հայ»: Ուշագրավ է գործածությունը ցուցադրող առաջին նախադասությունը՝ «Հայերն ըստ հայապահպանության բաժանվում էին երեք խոշոր հատվածի, ռուսահայեր, տաճկահայեր եւ պարսկահայեր» (այս պարագայում երկրորդը՝ «Նա ռուսահայ է», ավելորդ է թվում): Իսկ ինչո՞վ է ուշագրավ վերոբերյալ նախադասությունը: Բանն այն է, որ բառարանագիրն այնտեղ հոգնակիով գործածել է տաճկահայ եւ պարսկահայ բառերը, որոնք, սակայն, բառարանում գլխաբառ չեն դարձել: Կարող էին դառնալ, քանի որ երկուսն էլ լայն տարածում ունեցող բառային միավորներ էին: Հետաքրքրական է նաեւ այն, որ բառարանն ունի տաճկահայերեն բառը, որի բացատրության մեջ էլ խնդրո առարկա բառերից տաճկահայ-ը նորից կա՝ «տաճկահայոց գործածած հայերէն (լեզուն)» (հ. 4, էջ 369):

Բառարանը չի ներկայացնում ռուսահայ-ի երկրորդ իմաստը (ասենք՝ «ռուսահայերին հատուկ, նրանց վերաբերող»), ինչպես, օրինակ, կովկասահայ-ի դեպքում է: Այլ միայն նշվում է՝ իբրեւ ածական «Ռուսահայ մամուլ», որ խախտում է նմանատիպ բառերի ներկայացման միասնական մոտեցումը:

Ստ. Մալխասյանցը հիմնականում ճիշտ է լուծել «այսինչ երկրում/տարածաշրջանում բնակվող/ապրող» եւ «այսինչ երկրի հպատակ» իմաստային բաղադրիչների հարցը, ինչպես արվել է թուրքահայ բառահոգովածում: Ռուսահայ-ի դեպքում նշվում է միայն Ռուսաստանին հպատակ լինելու գաղափարը, բացակայում է «Ռուսաստանում բնակվող»-ը:

Որոշ անհետեւողականություն է ցուցաբերվել խոսքիմասային արժեքները ներկայացնելիս: Ինչպես տեսանք, հիշյալ բառերի մի մասը երկարժեք է դիտվել, ընդ որում՝ մի դեպքում առաջնություն է տրվել գոյականի, մյուս դեպքում՝ ածականի արժեքին. ամերիկահայ, թիւրքահայ, լեհահայ՝ ած. եւ գոյ., կովկասահայ, ռուսահայ՝ գոյ. եւ ած.: Բառերի մյուս մասը ներկայացվել է մեկ արժեքով. գոյականի՝ եգիպտահայ, հնդկահայ, հունգարահայ, կամ ածականի՝ անգլիահայ: Այսինչ հստակ է, որ բոլորն էլ երկարժեք են:

Ռուսահայ-ի եւ թիւրքահայ-ի համար քերականական նշում է արվել, որ հոգնակի ուղղական հոլովը կազմվում է -եր վերջավորությամբ, սեռականը՝-երի կամ -ոց (հայերի կամ հայոց): Ամերիկահայ, եգիպտահայ, լեհահայ, կովկասահայ եւ հնդկահայ բառերի դեպքում բացակայում են թե՛ մեկը, թե՛ մյուսը, չնայած որ բառարանագրի կազմած նմուշօրինակներ-

րում երբեմն հանդիպում են հիշյալ բառերի հոգնակիի ձևեր: Անգլիա-հայ-ի պարագայում դա հասկանալի է, քանի որ բառարանագիրն այն ածական է համարել:

Բառարանում գլխաբառից հետո փակագծերում հիմնականում նշվում է բառի արտասանությունը՝ հայ, իբր բառավերջի յ-ն արտասանվում է: Այդպես չէ եգիպտահայ, ռումանահայ, ռուսահայ-ի դեպքում, թեև մեզ թվում է, որ նման նշման կարիք ընդհանրապես չկար:

Վերոհիշյալ տարբերությունները չէին լինի, եթե բառարանագիրը խնդրո առարկա բառերը դիտարկեր իմաստային կամ բառակազմական միեւնոյն խմբի մեջ: Այդ դեպքում բառահոգվածները կմշակվեին միասնական մոտեցմամբ: Եթե դրանք մեկ խմբի մեջ դիտարկվեին, ապա հնարավոր է՝ դուրս չմնար պարսկահայ-ը, իսկ տաճկահայ-ը դառնար հղվող բառ կամ երեւար թուրքահայ/թուրքահայ-ի կողքին, իբրեւ հոմանիշ: Թեթեւս ընտրված բառերն էլ ավելի շատ լինեին:

Բառակազմորեն տարբեր է պոլսեցի երկարժեք բառը (բառարանը պոլսահայ գլխաբառ չունի): Ուշագրավ է բառի բացատրությունը՝ «Կոստանդնուպոլիս քաղաքի բնակիչ (սովորաբար հայերի մասին)» (հ. 4, էջ 112): Դիտարկենք բառի գործածությունը ցուցադրող նախադասություններից սա՝ «Պոլսեցոց բարքառը շատ դուրեկան է»: Խոսքն անշուշտ պոլսահայ բարբառի մասին է, իսկ պոլսեցի ասելով հայախոսները հասկանում են «պոլսահայ»: Սա հիմք է տալիս եզրակացնելու, որ պոլսեցի-ն եւս կարող է մտնել «արտերկրի հայ» իմաստային խմբի մեջ:

Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը»¹¹ (ակադեմիական բացատրական բառարան) «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների բառարանային մշակման հաջորդ (եւ կարեւոր) հանգրվանն է: Ստ. Մալխասյանցի ներկայացրած բոլոր բառերը պահպանվել են, որոշակիորեն հաշվի է առնվել բառարանային մշակման նրա փորձը. նրա բառարանի համեմատությամբ կա ինչպես առաջընթաց, այնպես էլ որոշ նահանջ: Համեմատենք:

Ամերիկահայ-ի դեպքում կրկնվում է Մալխասյանցի արածը. նշվում են բառի երկու արժեքները, իսկ բառիմաստը՝ «Ամերիկայում ապրող հայ», վերաբերում է միայն գոյականին (հ. 1, էջ 54): Ի տարբերություն Մալխասյանցի բառարանի՝ չկան բառի տարարժեքությունը ցուցադրող օրինակներ: Անշուշտ ճիշտ կլինեք բառիմաստի մեջ նշել ոչ թե Ամերիկայում, այլ ԱՄՆ-ում ապրող հայ, ինչպես որ ամերիկահայ-ին նախորդող

¹¹ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, 1969-1980 (այսուհետև կնշվեն հատորը եւ էջը):

եւ հաջորդող բառերն են բացատրվել՝ ամերիկահայաւրակ «ԱՄՆ-ի հպատակ (անձ)» եւ ամերիկացի «ԱՄՆ-ի քաղաքացի»:

Անգլիահայ-ը, ի տարբերություն Մալխասյանցի բառարանի, այստեղ երկարժեք է՝ «Անգլիայում բնակվող՝ Անգլիային հպատակ հայ» (գոյ.) եւ «Անգլիայում բնակվող հայերի» (ած.) (հ. 1, էջ 82), որ անհրաժեշտ ճշգրտում է: Բառահոգվածն ունի բառի գործածությունը ցուցադրող միայն մեկ նմուշ՝ անգլիահայ գաղութ:

Եգիպտահայ-ի դեպքում ավելացվել են գոյականի իմաստը ցուցադրող բնագրային օրինակ (Շիրվանզադեից), ածականի իմաստը՝ «Եգիպտոսի հայերին հատուկ՝ վերաբերող, եգիպտոսի հայերի», թեպետ նմուշի համար ինքնահար բառակապակցություններ են տրված՝ եգիպտահայ կյանք՝ մամուլ՝ գրականություն (հ. 1, էջ 540):

Թուրքահայ/թիւրքահայ/թրքահայ¹² տարբերակները պահպանվել են: Ակադեմիական բառարանը երեք դեպքում էլ հղում է արեւմտահայ-ին: Այս մոտեցումն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ թուրք է տալիս մտածել, որ բոլոր արեւմտահայերին կարելի է թուրքահայ կոչել: Լիբանանահայը, օրինակ, արեւմտահայ է, սակայն թուրքահայ չէ: Մալխասյանցի «Թուրքիայում բնակվող հայ. թուրքահպատակ հայ» բացատրությունից չպիտի հրաժարվեին. այն պետք է պահպանվեր իբրեւ բառի առաջին իմաստ, իսկ «արեւմտահայ»-ը դառնար երկրորդը:

Առանձին բառահոգվածով ներկայացվում է տաճկահայ-ը, որը վերը հիշվածների բառային տարբերակն է: Նշվում են երկու իմաստ եւ արժեք՝ «Արեւմտյան Հայաստանում եւ Տաճկաստանում՝ Թուրքիայում ապրող հայ կամ այնտեղից գաղթած հայ» (գոյ.) եւ «Թուրքիայի եւ Արեւմտյան Հայաստանի ապրող հայերին հատուկ՝ վերաբերող, արեւմտահայերի» (ած.) (դրանք հաստատվում են Զիվանու, Հովհ թումանյանի եւ Պ. Սեւակի լեզվից քաղված օրինակներով. հ. 4, էջ 441): Այս դեպքում, ի տարբերություն թուրքահայ / թիւրքահայ / թրքահայ-ի, ճիշտ մոտեցում է որդեգրվել. բառը սոսկ «արեւմտահայ» չի բացատրվում:

Լեհահայ բառահոգվածում ավելացվել է ածականի արժեքը մատնանշող նմուշ՝ Լեհահայ գաղութ, սակայն բացատրությունը՝ «լեհահայկական», բառարանից օգտվողին մղում է նայելու այդ բառի բացատրությունը՝ «լեհահայերին հատուկ, վերաբերող, լեհահայերի» (հ. 2, էջ 396): Կովկասահայ-ի դեպքում զեղչվել է ածականի արժեքը, գոյականի արժեքի համար կա բնագրային օրինակ Ստ. Շահումյանից: Հնդկահայ-ի գոյականի

¹² Առաջին երկուսի դեպքում զետեղվել են գործածության բնագրային օրինակներ (հ. 2, էջ 255, 215):

արժեքից բացի նշվել է նաեւ ածականին՝ «հնդկահայերին վերաբերող՝ հատուկ, հնդկահայերի» (հ. 3, էջ 362):

Ռումինահայ. ընտրվել է արեւելահայերենում արմատացած այս ձեւը՝ ի տարբերություն ռումանահայ-ի, որը գործածական է արեւմտահայերենում: Սահմանազատվել են բառի արժեքները եւ իմաստները՝ «Ռումինիայում վերաբնակված հայ» (գոյ.) եւ «Ռումինիայում վերաբնակված հայերին հատուկ» (ած.) (հ. 4, էջ 255): Ճիշտ է, «Ռումինիայում վերաբնակված հայ» ձեւակերպումը Մալխասյանցինն է, բայց այն հարց է առաջ բերում. չէ՞ որ բոլոր դեպքերում էլ հայերը վերաբնակվել են օտար երկրներում: Այդ «վերաբնակված» բառն ավելորդ է հատկապես ածականական իմաստի դեպքում՝ «Ռումինիայում վերաբնակված հայերին հատուկ», երբ կարող էր լինել պարզապես «Ռումինիայի հայերին հատուկ»: Ուստի չափիտի շեղվելին բառարանի նախորդ հատորներում բառիմաստը ներկայացնելու կաղապարից՝ «այսինչ երկրում բնակվող՝ ապրող հայ, այսինչ երկրի քաղաքացի կամ հպատակ հայ»: Բառահոգվածը կրկին բնագրային օրինակներով չի օժտվել, կազմողները բավարարվել են ռումինահայ գրականություն բառակապակցությունում:

Ռուսահայ բառահոգվածի մշակումն առավել ամբողջական է: Նշվում են բառի զույգ իմաստները՝ 1. (գոյ., ած.) «Ռուսաստանում ապրող հայ, ռուսահպատակ հայ», 2. (ած.) «ռուսահայերին հատուկ՝ վերաբերող, ռուսահայերի»: Երկու իմաստների համար էլ կան բնագրային օրինակներ (Վ. Տերյանից. հ. 4, էջ 256):

Բառարանային մշակման համակարգայնության թերություն է, որ բառահոգվածում արեւելահայ բառի որեւէ ակնարկ չկա, ինչպես որ թուրքահայ-ի դեպքում արեւմտահայ-ն է հիշատակվում:

Դրական քայլ է, որ ակադեմիական բառարանն ընդարձակել է «արտերկրի հայ» իմաստային խմբի բառերի ընդգրկման շրջանակը: Միանգամայն ճիշտ է միջուկային գաղութահայ, գաղթահայ եւ սփյուռքահայ միավորների ներառումը բառացանկ:

Գաղութահայ եւ սփյուռքահայ-ը, ինչպես համանման կառուցվածքն ունեցող մյուս բառերը, ձեւաբանորեն տարարժեք են, իմաստաբանորեն էլ սերտորեն առնչվում են: Այսպես, գաղութահայ «հայրենիքից դուրս ապրող հայ, սփյուռքահայ» (գոյ.), «գաղութահայությունը վերաբերող՝ հատուկ, գաղութահայերի, գաղութահայության» (ած.) (հ. 1, էջ 366) եւ սփյուռքահայ «սփյուռքի հայությունը վերաբերող՝ հատուկ, սփյուռքահայության» (ած.), «սփյուռքի հայ» (գոյ.) (հ. 4, էջ 352): Այս բառե-

րի չորս իմաստների համար ակադեմիական բառարանը գործածություն միայն մեկ բնագրային նմուշ է մատուցում (գաղութահայ-ի համար՝ Վ. Թոթովենցից) այն դեպքում, երբ հայաստանյան եւ սփյուռքի հատկապես մամուլը հեղեղված է այդ բառերով: Առանձին, առանց փոխադարձ հղման է տրվել գաղութահայ-ը: Սա ներկայացվել է մամուլից քաղված մեկ օրինակով եւ համարվել գոյական՝ «հայրենիքից դուրս՝ գաղթավայրերում ապրող հայ» (հ. 1, էջ 364):

Մալխասյանցի բառարանի հետ համեմատած՝ ակադեմիական բառարանում ընդհանրական անուններից բացի որպես գլխաբառ ավելացել են մասնավոր անուններ՝ արգենտինահայ, թիֆլիսահայ, հունահայ, չեքքեզահայ, պարսկահայ, պոլսահայ, տաճկահայ եւ ֆրանսահայ: Այսպիսով բառարանն ընդգրկել է «արտերկրի հայ» նշանակող 18 բառ:

Արգենտինահայ-ը ներկայացվում է երկու արժեքով, «երկրի հպատակ» իմաստային բաղադրիչի փոխարեն գրվել է «քաղաքացի»՝ «Արգենտինայի բնակիչ կամ քաղաքացի հայ», իսկ ածականի իմաստը ներկայացվում է հոգնակի սեռականի միջոցով՝ «Արգենտինայում բնակվող հայերի» (հ. 1, էջ 212): Սպասելի էր մյուս բառերի դեպքում կիրառված «Արգենտինայում բնակվող հայերին հատուկ՝ վերաբերող» ձևակերպումը եւս:

Թիֆլիսահայ-ը ցայտմ քննարկվածներից տարբերվում է: Եթե մյուսներն ունեն «այսինչ երկրում/տարածաշրջանում բնակվող հայ» կամ «այսինչ երկրի հպատակ հայ» իմաստը, ապա այստեղ բարդություն առաջին բաղադրիչը քաղաքանուն է՝ Վրաստանի մայրաքաղաք հայաշատ Թբիլիսիի հին անուններից մեկը: Ձեւաբանորեն երկարժեք է. գոյ.՝ «Թբիլիսիում բնակվող հայ», ած.՝ «Թիֆլիսի հայկական», բնագրային օրինակով. «Ներկա էր թիֆլիսահայ հասարակության սերուցքը» (Ա. Սահինյան) (հ. 2, էջ 205):

Հունահայ-ը եւս երկարժեք է. «1. գ. Հունաստանում բնակվող հայ, 2. ա. Հունաստանում ապրող հայերից կազմված, Հունաստանի հայերի» (Հունահայ գաղութ) (հ. 3, էջ 399): Անշուշտ, ավելի լավ կլիներ, եթե երկրորդ իմաստի «Հունաստանի հայերի» բառակապակցության փոխարեն ասվեր հունահայերի: Սա կլիներ նաեւ բառի հավելյալ մի գործածություն, ինչպես հաճախ մյուս բառերի դեպքում է արվել (հմմտ. բառարանում պարսկահայ բառի «Պարսկաստանում ապրող հայերին հատուկ, պարսկահայերի» իմաստը):

Չեքքեզահայ-ն ուշագրավ է նրանով, որ բացատրվում է ոչ թե պետություն կամ երկրի անվան միջոցով, այլ ազգություն՝ «չեքքեզների

շրջանում ապրող հայ» (գոյ.), հետեւյալ բնագրային օրինակով. «Շարք հեւրաքրքրական է եւ հեւրագոյութեան արժանի նաեւ չերքեզահայերի 800 տարւա պատմութիւնը» (մամուլ). հ. 4, էջ 136): Պատճառն այն է, որ հյուսիսկովկասյան այս ժողովուրդն անկախ պետականութիւն երբեւէ չի ունեցել: Մյուս կողմից էլ, սակայն, պիտի փաստենք, որ կա Չերքեզիա տեղանունը. այնպէս որ չերքեզահայ-ը կարող էլ մեկնաբանվել նաեւ այսպէս՝ «Չերքեզիայում ապրող հայ»: Ածականի արժեքը (չերքեզահայ պատմություն) ներկայացվում է «չերքեզահայերի» սեռականի ձևի միջոցով:

Պարսկահայ-ի մասին խոսել ենք Մալխասյանցի բառարանի կապակցութեամբ. այն գլխաբառ դարձնելը միանգամայն ճիշտ քայլ է: Պարսկահայ-ն ակադեմիականում տրված է «Պարսկաստանում ապրող կամ ապրած հայ» եւ «Պարսկաստանում ապրող հայերին հատուկ, պարսկահայերի» իմաստներով, իբրեւ տարարժեք բառ (ինքնահնար նախադասութեամբ եւ բառակապակցութեամբ): Հետաքրքրական է «Պարսկաստանում ապրած հայ» իմաստային բաղադրիչը. 1829-ի հայահաւաքից հետո բաղմաթիվ պարսկահայեր վերադարձան մայր հայրենիք, որտեղ նորեկներին տեղացիները երկար ժամանակ «պարսկահայ» էին կոչում:

Սպասելի էր նաեւ իրանահայ¹³ բառի ընդգրկումը եւս (բառացանկում կան իրանցի, իրանուի, նույնիսկ իրաներեն եւ իրանիզմ):

Պոլսահայ բառի առաջին բաղադրիչը քաղաքանուն է՝ Բյուզանդիայի (նաեւ Օսմանյան կայսրութեան) երբեմնի մայրաքաղաք Կոստանդնուպոլսի Պոլիս կրճատ տարբերակը: Պոլսահայ-ը մյուսների նման երկարժեք է, ունի «պոլսեցի»¹⁴ հայ, կոստանդնուպոլսեցի հայ», «պոլսահայերին հատուկ, պոլսահայերի» իմաստները (հ. 4, էջ 211): Բնագրային օրինակը կրկին Վ. Տերյանից է, միայն ածականի արժեքի համար: Պատահական չէ թիֆլիսահայ եւ պոլսահայ բառերի ներառումը բառացանկ. Թիֆլիսը եւ Պոլիսը արեւելահայութեան եւ արեւմտահայութեան մշակութային հզոր կենտրոններն էին:

Քրանսահայ-ի դեպքում նշվում են ածականի եւ գոյականի արժեքները, սակայն տրված երկու իմաստներն էլ վերաբերում են գոյականին՝ «1. Ֆրանսիայում ապրող հայ, 2. Ֆրանսահայատակ հայ»: Մամուլից քաղված օրինակն էլ, որ ղեկեղված է «Ֆրանսահայատակ հայ» իմաստից հետո, ածականի արժեքն է ցուցադրում. «Հռչարորը կոչ արեց ֆրանսահայ

¹³ 1935 թվականից Հայաստանի հարավային հարեւան պետության պաշտոնական անվանումն է Իրան (այժմ՝ Իրանի Իսլամական Հանրապետություն), ուստի եւ բնական է, որ տարածվել է իրանահայ-ը:

¹⁴ Բառարանը չունի պոլսեցի, որն ուներ Մալխասյանցը:

երկրասարդությանը...» (Հ. 4, էջ 826): Վերոհիշյալ բառերի ղեպքում հիմնականում չի պահպանվել բառարանի որդեգրած սկզբունքը՝ բառերի իմաստներն ու արժեքները ցուցադրել բնագրային օրինակների միջոցով:

Ուշադրություն է արժանի հետեւյալ փաստը. բառարանն արձանագրել է վիրահայություն «Վրաստանում ապրող հայերը, Վրաստանի հայությունը, վրացահայություն» հավաքական գոյականը (Հ. 4, էջ 416)՝ չըջանցելով նրա բառակազմական հիմքը՝ վիրահայ, որ ցավալի բացթողում է:

Էդ. Աղայանի բացատրական բառարանը¹⁵ հայերենի ընդգրկումն բառարաններից է, որը, սակայն, քննարկվող բառերի ներկայացման եւ մշակման պատմության մեջ էական դեր չունի: Հիմնականում կրկնում է նախորդ բառարաններին, նույնիսկ ընդգրկված բառակազմի մեջ որեւէ ավելացում չի կատարվել, ընդհակառակը՝ դուրս են թողնվել Մալխասյանցի բառարանում եւ ակադեմիականում արձանագրված անգլիահայ-ը, ակադեմիական բառարանի արգենտինահայ, թիֆլիսահայ եւ պոլսահայ բառերը: Դժվար է ասել, թե ինչո՞ւ:

Ակադեմիական բառարանի համեմատ որոշ բառահոգվածներում կատարվել են մասնակի շտկումներ կամ լրացումներ: Այսպես՝ տրվել է ամերիկահայ-ի ածականական իմաստը՝ «ամերիկահայության հատուկ» (էջ 33), ռուսահայ-ի «ռուսահպատակ հայ» մեկնաբանման կողքին ավելացվել է «արեւելահայ» (էջ 1265):

Սակայն ոչ բոլոր փոփոխություններն են տեղին: Օրինակ՝ կովկասահայ-ն ուղղակի հղվում է արևելահայ-ին (էջ 760), այնինչ բառը բացատրության կարիք ունի՝ «Կովկասում բնակվող հայ», ինչպես որ արել են նախորդ բառարանները: Պիտի հաշվի առնել այն հանգամանքը, որ, օրինակ, պարսկահայերն էլ են արեւելահայ, սակայն կովկասահայ չեն, իսկ բազմահազար համչենահայեր Կովկասում են բնակվում, բայց արեւելահայ չեն:

Հունգարահայ եւ ռումինահայ բառերի առաջին իմաստները ձեւակերպվել են այսպես՝ «Հունգարիայի հայկական գաղութի հայ» եւ «Ռումինիայի հայկական գաղութի հայ» (էջ 911, 1265), որտեղ բոլորովին ավելորդ է հայկական գաղութի կապակցությունը. կարող էր լինել ուղղակի «Ռումինիայի հայ» կամ «Հունգարիայի հայ»: Ռումինահայ-ի ածականի արժեքի ղեպքում պատկերը նույնն է՝ «Ռումինիայի հայկական գաղութին հատուկ՝ վերաբերող»: Հունգարահայ-ի նույն արժեքի ղեպքում գտնվել

¹⁵ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976 (այսուհետեւ կնշվի համապատասխանը էջը):

է լավագուշն լուծումը՝ «հունգարահայերին հատուկ՝ վերաբերող, հունգարահայերի»:

Ռուսահայ-ին վերագրվել է հինգ իմաստ (Մալխասյանցի եւ ակադեմիականի երկուսի դիմաց), որոնցից երեքն արհեստականորեն մանրատված են. հմմտ. «ռուսահայերին հատուկ՝ վերաբերող, ռուսահայերի» (նույնությամբ կրկնում է ակադեմիական բառարանին) եւ «ռուսահայերի գաղութին հատուկ՝ վերաբերող» կամ «Ռուսաստանում ապրող հայ» եւ «ռուսական հայ գաղութում ապրող հայ» (էջ 1265): Վերջիններն ավելորդ են թվում:

Գաղութահայ-ի «գաղութահայության հատուկ» իմաստից հետո ավելորդ է թվում «հայկական գաղթաշխարհին հատուկ, գաղթաշխարհում տեղի ունեցող՝ զարգացող» մասնավորումը (էջ 217), հատկապես «զարգացող» իմաստային բաղադրիչը: Այստեղ, ի տարբերություն ակադեմիական բառարանի, գաղութահայ-ը հղվել է գաղութահայ-ին, այսինքն՝ հստակորեն տարբերակներ են դիտվել:

Այսպիսով՝ արեւելահայերենի բացատրական ընդարձակ բառարաններում գլխաբառ են դարձել՝ ամերիկահայ, անգլիահայ, արգենտինահայ, գաղ(ու)թահայ, եգիպտահայ, թիֆլիսահայ, թ(ու)րքահայ, լեհահայ, կովկասահայ, հնդկահայ, հունահայ, հունգարահայ, չեքեզահայ, պարսկահայ, պոլսահայ, պոլսեցի, ռումինահայ, ռուսահայ, սփյուռքահայ, քաճկահայ, ֆրանսահայ, ընդամենը 21 միավոր:

Հնարավոր է՛ հիմնավորել, թե ինչո՛ւ ֆրանսահայ-ը կամ, ասենք, արգենտինահայ-ը բառարաններում գլխաբառ է դարձել, իսկ լիբանանահայ, սիրիահայ, բրազիլահայ եւ սրանց նման մի քանի տասնյակ բառեր, որոնք ակտիվ գործածվում էին հիշյալ բառարանները կազմելուց բավական ժամանակ առաջ, բացակայում են: Ընդ որում, եթե հաշվի առնենք համայնքի պատմությունը, կենսունակությունը, հայաշատությունը, սփյուռքում ունեցած դերը եւ այլ հատկանիշներ, թվարկված բառերն ավելի շուտ կարող էին «հավակնել» գլխաբառ դառնալու:

«Արտերկրի հայ» նշանակող բառեր գրանցվել են ոչ միայն բացատրական, այլ նաեւ այլ տեսակի բառարաններում:

Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում»¹⁶ որպես հոմանշային զույգ ներկայացվել են միջուկային գաղութահայ եւ սփյուռքահայ բառերը¹⁷, բառահոգւվածում գետեղվել է նաեւ գաղթահայ տարբերակը (էջ 135): Հոմանշային զույգ կազմել են նաեւ տեսականիչ բառեր՝

¹⁶ Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երեւան, 1967:

¹⁷ Բառարանն սփյուռքահայ գլխաբառ չունի:

պարսկահայ - իրանահայ, թուրքահայ - տաճկահայ (էջ 545, 228): Այստեղ կարող էր լինել նաև անգլիահայ - բրիտանահայ հոմանշային զույգը (չնայած բրիտանահայ-ը հայերենի բառարաններում տակավին գրանցված չէ):

«Արտերկրի հայ» նշանակությամբ մի շարք բառեր տեսնում ենք հայ բառահոգեվածում: Հայ հենաբառից հետո տրվում են հոմանիշները՝ հայազգի, հայկազն, հայազարմ, հայազուն, հայկազուն եւ այլն (էջ 361), այնուհետև՝ ափյուռահայ, արեւելահայ, արեւմտահայ, ռուսահայ, վրացահայ, վիրահայ, ամերիկահայ, եգիպտահայ, հնդկահայ, պարսկահայ, իրանահայ, ռումինահայ, բուլղարահայ, ֆրանսահայ, թուրքահայ, լեհահայ, հունգարահայ, կովկասահայ, դրիմահայ, չեքեզահայ, տաճկահայ: Բացատրական բառարանների համեմատությամբ ավելացել են բուլղարահայ, իրանահայ, դրիմահայ, վրացահայ/վիրահայ բառերը, ընդհանուր առմամբ՝ խնդրո առարկա իմաստային խմբի 18 միավոր:

Ճիշտ կլիներ, որ ենթաշարքից զատ տրվեին արեւելահայ-ը եւ արեւմտահայ-ը, քանի որ հայ ժողովրդի երկու մեծ հատվածներն են ներկայացնում: Ի դեպ, հենց սրանք բառարանում առանձին բառահոգեվածներով են տրված՝ հղում անելով, իհարկե, Հայ-ին: Այդ դեպքում կմնար ափյուռահայ-ը (որպես սեռանիշ բառ)՝ իր տեսականիչ անվանումներով¹⁸:

Կռահելի չէ բառերի դասավորության սկզբունքը: Դրանք այբբենական կարգով չեն դասավորվել կամ ըստ դրանց ստվարություն, հնության, ազդեցիկություն, ընդհանուրի եւ մասնավորի հարաբերության (օրինակ՝ ռուսահայ-կովկասահայ): Լիարժեք չի հաշվառվել նույնանշության հանգամանքը. թուրքահայ - տաճկահայ-ն իրարից հեռու են դրվել, այնինչ պարսկահայ-իրանահայ-ը՝ իրար մոտ, ինչպես որ կողք կողքի են վրացահայ/վիրահայ տարբերակային միավորները: Բառարանից օգտվողը չի կարող կողմնորոշվել, թե վրացահայ, վիրահայ բառերի հարցում ինչպիսի՛ մոտեցում ունենա, երկուսն էլ կանոնակա՞ն են, արդյոք գործածության առանձնահատկություններ ունե՞ն, թե՞ ոչ:

Այստեղ եւս չպատճառաբանված է մնում բառանյութի ընտրությունը, մի կողմից առկա է չեքեզահայ-ը, մյուս կողմից բացակայում են, օրինակ, արդեն հիշատակված իրանանահայ-ը եւ ափրիահայ-ը:

Ա. Սուքիասյանը «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանում»¹⁹ վերանայել է իր նախկին մոտեցումը: Հայ բառահոգեվածում

¹⁸ Մեր կարծիքով բուլղարահայ, հնդկահայ կամ դրիմահայ բառերը, օրինակ, հոմանշային հարաբերության մեջ չեն. դրանք պարզապես իմաստային ընդհանուր կողմ ունեն:

¹⁹ Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երեւան, 2009, էջ 581:

իրբեւ ենթաշարք առանձնացվել են արեւելահայ, արեւմտահայ, սփյուռքահայ բառերը՝ առանց վերոհիշյալ տեսականիչ բառերի: Սա ավելի ճիշտ մոտեցում է, քանի որ այդպես վերացել են վերոնշյալ թերութիւնները:

Բառարանն ունի սփյուռքահայ գլխաբառ, որի հոմանիշներն են գաղթահայ, գաղութահայ: Այն բացատրված է՝ երկնով բառարանի տեսակից (բացատրական). «Սփյուռքում բնակվող Հայ» եւ «սփյուռքահայութեանը հատուկ» (էջ 1035): Նախորդ բառարանի հետ համեմատելով՝ տեսնում ենք, որ գաղութահայ-ը կրկին հղվում է սփյուռքահայ-ին, դուրս է թողնվել գաղթահայ-ը: Պահպանվել է պարսկահայ- իրանահայ զույգը, թուրքահայ-ը եւ փաճկահայ-ը զույգով չեն ներկայացվել, այլ առանձին հղվում են արեւմտահայ-ին (սա էլ՝ հայ-ին):

Անդրադառնալով սփյուռքահայ (արեւմտահայերենի) բառարանագրութեանը, մասնավորապես բացատրական բառարաններին:

Գ. արք. Ճերեճյանի, Փ. Կ. Տոնիկյանի եւ Ա. Տեր-Խաչատուրյանի «Հայոց լեզուի նոր բառարանը»²⁰ «արտերկրի Հայ» նշանակող բառերի բավական մեծ ընդգրկում ունի: Այստեղ արձանագրվել եւ բացատրվել են ամերիկահայ, անգլիահայ, գաղութահայ/գաղթահայ, եգիպտահայ, եթովպահայ, թրքահայ/թուրքահայ, լեհահայ, կովկասահայ, հնդկահայ, հունգարահայ, պարսկահայ, ռումինահայ, ռուսահայ, սփյուռքահայ, փաճկահայ, ֆրանսահայ բառերը, ընդամենը 16 միավոր: Թվարկվածներից Մալխասյանցի բառարանում գլխաբառ չեն գաղ(ութ)ահայ, եթովպահայ, պարսկահայ, սփյուռքահայ, ֆրանսահայ-ը (բացի եթովպահայ-ից, սրանք կան ակադեմիական բացատրականում):

Մալխասյանցի բառարանի ազդեցութիւնը նկատելի է ոչ միայն բառերի ընտրութեան, այլեւ նրանց ձեւաբանական արժեքների որոշման եւ իմաստների ներկայացման մեջ: Այսպես. եգիպտահայ-ի համար նշվում է մեկ արժեք՝ (գոյ.). «Եգիպտոսի մէջ բնակող Հայ» (հ. 1, էջ 525), լեհահայ-ի համար՝ երկու (ած., գոյ.), սակայն «Լեհաստանի մէջ բնակող Հայ, բոլոնահայ»²¹ իմաստը (հ. 1, էջ 763) վերաբերում է միայն գոյականին: Ռումինահայ-ի բացատրութեան մեջ արդարացված չէ «վերաբնակված» տարրի ներմուծումը. «Ռումանիա ծնած կամ հոն վերաբնակուած Հայ» (հ. 2, էջ 765). այն, ըստ էութեան, կարող է լինել այս իմբի բոլոր բառերի դեպքում: Ընդհանուր գծեր կարելի է նկատել նաեւ կովկասահայ-ի պա-

²⁰ Գ. Արք. Ճերեճեան, Փ. Կ. Տոնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1-2, Բեյրութ, 1992 (այսուհետեւ կնշվեն հատորը եւ էջը):

²¹ «Բոլոնահայ» հավելյալ բացատրությունը բոլորովին ավելորդ է թվում:

րագայում. «Կովկասի մէջ բնակող Հայ՝ հակադրութեամբ արեւմտահայ եւ թրքահայ բառերուն» (Հ. 1, էջ 1046):

Բառերի մշակման հարցում հաշվի է առնվել ակադեմիական բացատրական բառարանի փորձը եւս. հնդկահայ-ը բացատրվել է նախ որպէս գոյական՝ «Հնդկաստանի մէջ բնակող Հայ», ապա նաեւ ածական՝ «Հնդկաստանի մէջ բնակող Հայերու կամ հնդկահայերու»²² յատուկ՝ վերաբերեալ» (Հ. 1, էջ 1250): Այդպէս էլ հունգարահայ՝ «Հունգարիոյ մէջ ապրող Հայ» եւ «Հունգարիոյ մէջ բնակող Հայերուն յատուկ՝ վերաբերեալ» (Հ. 1, էջ 1278):

Բառարանների ազդեցութիւնները, նմանութիւններն ու տարբերութիւնները բնական են ու հասկանալի: Դրանք նկատելի են դառնում, երբ կողք կողքի են դրվում դրանցում ներկայացված նյութերը: Համեմատենք, օրինակ, անգլիահայ-ի արժեքները եւ իմաստները երեք բառարաններում.

Մալխասյանց. ած. «Անգլիայում բնակող՝ Անգլիային հպատակ Հայ, Անգլիայի քաղաքացի Հայ».

ակադեմիական. 1. գ. «Անգլիայում բնակվող՝ Անգլիային հպատակ Հայ», 2. ա. «Անգլիայում բնակվող Հայերի».

արեւմտահայերեն. ած. գ. «Անգլիա բնակող Հայ» եւ գ. «Անգլիոյ քաղաքացի Հայ»:

Ուշագրավ են բառահոգւածների մշակման ինքնուրույն մոտեցումները: Այսպէս՝ գաղութահայ-ը հղվում է գաղթահայ-ին, որը երկարժեք է համարվել եւ բացատրվել այսպէս՝ «1. Սփիւռքահայ, հայրենիքէն դուրս ապրող Հայ, 2. պանդուխտ, նժդէհ, հականիշը՝ հայրենասիրակ» (Հ. 1, էջ 361): Երկրորդ իմաստը, ի դեպ, այլ բառարանում չի հանդիպում:

Ամերիկահայ-ի դեպքում նշվում է միայն գոյականի արժեքը՝ շեշտելով ոչ միայն Ամերիկայում բնակվելու, այլեւ քաղաքացիութեան հանգամանքը. «1. Ամերիկա բնակող Հայ, 2. ամերիկեան քաղաքացի դարձած Հայ» (Հ. 1, էջ 39): Այնինչ աներկբա է նաեւ ածականի արժեքը՝ ամերիկահայ գաղութ, համայնք, գրող, բեմադրիչ, գյուրարար եւ այլն: Նկատենք, որ երբ խոսքը վերաբերում է քաղաքացիութեանը, ստույգ կլիներ ԱՄՆ գրելը:

Պարսկահայ-ը բացատրված է «1. գ. Պարսկաստանի մէջ ծնած եւ ապրող Հայ, 2. ած. Պարսկաստանի մէջ ապրող Հայերէ կազմուած՝ գոյացած, 3. Պարսկաստանի հայկական գաղութին վերաբերող» (Հ. 2, էջ

²² Բառարանում գլխատառով է՝ Հնդկահայերու, որ անշուշտ վրիպակ է: Կան այլ վրիպակներ եւս. չի նշվում բառի համապատասխան արժեքը կամ ճիշտ տեղում չի նշվում, հայ-ը գերազանցապէս գլխատառով է տրված, որոշ դեպքերում՝ փոքրատառով եւ այլն:

702), որտեղ երկրորդ իմաստը, թվում է, ավելորդ է առանձնացվել. կարող էին ներկայացվել միայն առաջինը եւ երրորդը: Բառահոգւածում նշված է պարսկահայ -ի հոմանիշը՝ իրանահայ, որը գլխաբառ չի դարձել: Առհասարակ հարկ է արձանագրել, որ իրանահայ-ը գլխաբառ դարձնելու ավանդույթ հայ բառարանագրության մեջ դեռեւս չի ձեւավորվել:

Սիհլոքահայ-ի «սփիւռքաբնակ հայ», «գաղութահայութեան վերաբերող՝ յատուկ», «սփիւռքի մէջ ծնած՝ գործող» (հ. 2, էջ 857) բացատրության մեջ թերեւս «դժվարմարտելի» է «սփիւռքաբնակ»-ը:

Բառարանը, ինչպես տեսանք, հատուկ նշումով երբեմն տալիս է բառի հոմանիշը կամ հականիշը, որ հայաստանյան բառարաններում ընդունված չէ: Հազվադեպ բառի բացատրության մեջ հավելյալ տեղեկութիւն է հաղորդվում: Այսպես, թրքահայ/թուրքահայ բառահոգւածում. «1. ած. Թիւրքիոյ մէջ բնակող Հայերու յատուկ՝ վերաբերեալ. օր.՝ Թրքահայ գրականութիւն, 2. գ. Թիւրքիոյ մէջ բնակող Հայ. 3. ած. Թրքահայատակ Հայ, տաճկահայ, արեւմտահայ (երբ տակաւին Հայութիւնը չէր ցրուած աշխարհով մէկ)» (ընդգծումը մերն է – Դ.Գ., հ. 1, էջ 710): Կամ՝ րաւահայ բառի «Օսմանեան կայսրութեան, ապա Թուրք հանրապետութեան հայ քաղաքացի. Թրքահայ» բացատրութիւնից հետո՝ «Այսօր մենք կը նախընտրենք գործածել արեւմտահայ եզրը» (էջ 927):

Բառարանագրական մշակման տեսանկյունից ամբողջական է ոռուսահայ բառահոգւածը. «1. գ. ռուսահայատակ հայ, արեւելահայ, 2. Ռուսաստանի մէջ ապրող հայ, 3. ած. Ռուսաստանի հայ գաղութին վերաբերող» (հ. 2, էջ 765):

Այս բառարանում արձանագրվել է եթովպահայ «Եթովպիոյ՝ Հապէ-չիստանի մէջ բնակող Հայ» բառը (հ. 1, էջ 529)՝ գոյականի արժեքով: Սա անհրաժեշտ լրացում է:

Անհաջող է ֆրանսահայ բառահոգւածը, համանման բառերի բառարանային մշակումից բավական տարբեր: Բառին վերագրվել են ակնհայտորեն ուղեւորված չորս իմաստներ: Առաջին՝ «օտար երկիր ծնած, սակայն Պրանսա գաղթած եւ հոն ապրած՝ ապրող հայ» (հ. 2, էջ 1163) իմաստի «օտար երկիր» կապակցութիւնից ի՞նչ ենք հասկանում, իսկ եթե Հայաստանո՞ւմ է ծնվել ու հասել Պրանսիա՞ (թե՞ Պրանսիայի կողմից է «օտար երկիր» ձեւակերպումը): Երկրորդ իմաստը՝ «Պրանսա ծնած եւ մեծցած հայ», կարող էր միավորվել առաջինին: Այդպես էլ երրորդ իմաստի առկայութեամբ («Փրանսահայութեան յատուկ՝ վերաբերեալ») ավելորդ է թվում չորրորդը՝ «Փրանսահայ գրականութեան՝ մշակոյթին յատուկ՝ վերաբերեալ»:

Այս բառարանի դեպքում եւս պետք է նշենք, որ խոցելի է բառընտրությունը: Զարմանալի է, որ բառարանագիրները բառացանկ չեն ներմուծել անգամ իրենց համայնքի, տարածաշրջանի (էլ չենք ասում հեռավոր) երկրների հայկական գաղութների ներկայացուցիչ նշանակող շատ բառեր, ինչպես՝ լիբանանահայ, պէյրութահայ, սուրիահայ, իրաքահայ, յորդանանահայ, արժանթինահայ եւ այլն:

Պետրոս վրդ. Ճիզմենյանի բացատրական բառարանում²³ արձանագրվել եւ բացատրվել են հետազոտվող բառախմբի հատուկներ միավորներ, ինչպես՝ գաղթահայ՝ «հայեր որ կ'ապրին հայրենիքէն դուրս օտար տեղ, Հայաստանէն դուրս ապրող հայ» (հ. 1, էջ 10)²⁴, անգլիահայ «Անգղիա բնակող եւ հպատակ հայ»²⁵ (հ. 1, էջ 215), ռուսահայ «Ռուսիոյ մէջ բնակող հայ, - հպատակ» (հ. 2, էջ 1256), երեքն էլ միայն գոյականի արժեքով:

Անհասկանալի է, թե անգլիահայ-ի եւ ռուսահայ-ի առկայությունը դեպքում ինչո՞ւ չկան հաճախադեպ (բառարաններում եւ լեզվում առհասարակ) թրքահայ, փրանկահայ կամ էլ ամերիկահայ եւ ֆրանսահայ բառերը:

Ա. Տեր-Խաչատուրյանի, Հ. Գանգրունու եւ Փ. Կ. Տոնիկյանի կազմած բացատրական բառարանում²⁶ քննարկվող իմաստային խմբի մի քանի միավոր է հանդիպում, առաջին անգամ գրանցվածներ չկան: Ընդհանրական անուններից որպես ածական է ներկայացվել գաղթահայ-ը՝ «գաղութներու մէջ ապրող հայ. սփիւռքահայ» բացատրությամբ (էջ 84): Հենց այստեղ հիշատակված ամերիկահայ-ը գլխաբառ չի դարձել:

Թրքահայ, փրանկահայ հոմանիշները դիտվել են երկարժեք (ած./գոյ.) եւ բացատրվել միայն որպես «արեւմտահայ» (այդ առումով չեն առնչվում «արտերկրի հայ» իմաստային խմբին): Թրքահայ-ը բացատրվել է որպես «արեւմտահայաստանի»²⁷ բնակիչ. արեւմտահայ, տաճկահայ» (էջ 444), փրանկահայ-ը՝ գրեթե նույն կերպ՝ «Արեւմտեան Հայաստանի բնակիչ, Թրքահայ, արեւմտահայ» (էջ 822):

²³ Պետրոս վրդ. Ճիզմենյան, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 1-2, Հալեպ, 1954-1957:

²⁴ Սփիւռքահայ -ն այս բառարանում չկա: Այդ բառի կազմության եւ լայն գործածության մեջ մտնելու ժամանակի խնդիրն առանձին ուսումնասիրության կարիք ունի:

²⁵ Գլխաբառում լ է, բացատրության մեջ՝ դ: Այդ նույն էջում՝ անգլիաբան, անգլիական, անգլիամոլ եւ այլն, հաջորդ էջում՝ անգլիաբանություն, անգլիական, անգլիացի եւ այլն:

²⁶ Ա. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տոնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, Բեյրութ, 1968:

²⁷ Այստեղ ուղղագրական մի քանի անմիօրինակություններ կան, ինչպես՝ Արեւմտեան Հայաստան, արեւմտահայաստան, արեւելեան Հայաստան եւ այլն:

Ռուսահայ-ը ներկայացված է գոյականի արժեքով: Առաջին իմաստով բացատրվել է որպես «Ռուսիոյ մէջ ապրող հայ» (էջ 743), երկրորդով՝ «արեւելահայ»՝ «արեւելեան Հայաստանի մէջ ապրող հայ», ուստի մասամբ է մտնում «արտերկրի հայ» իմաստային խմբի մեջ:

Հնդկահայ-ը լիովին համապատասխանում է տրված իմաստային խմբին՝ «Հնդկաստանի մէջ ապրող հայ» (էջ 444): Կրկին միայն գոյականի արժեքով է տրվել:

Ինչպես տեսնում ենք, խոսքիմասային արժեքների հարցում պատկերը խայտաբղետ է: Անբացատրելի է մնում բառերի այսպիսի ընտրությունը:

Անդրանիկ վրդ. Կռանյանի գործնական բառարանում²⁸ քննարկվող իմաստային խմբի քիչ բառեր են արձանագրվել: Հետաքրքրական է բառարանի առաջին եւ վերջին հրատարակությունների ընդգրկած բառայությունի համեմատությունը: Առաջինում գաղութահայ-ը («գաղթավայրերում մէջ հաստատուած հայ. սփիւռքահայ») եւ ֆրանսահայ-ը («Ֆրանսայի հայ») միայն գոյական են համարվել, իսկ լեհահայ («Լեհաստանի (Բոլոնիոյ) հայ» բառերը՝ երկու արժեքով (էջ 145, 158), սփիւռքահայ-ը՝ միայն գոյականի արժեքով եւ «գաղթահայություն» բացատրությամբ (էջ 426), որ ճիշտ չէ (գաղթահայություն բառի համարժեքը սփիւռքահայությունն է):

Բառի ընտրության համակարգայնությունն ապահովելու հարցում անհրաժեշտ էր թրքահայ-ի եւ սփիւռքահայ-ի հավելումը, իսկ մասնավոր անունների ընտրությունը դժվար է հիմնավորել:

Գ. Քերովբյանի բառարանում²⁹ հանդիպում են միայն թրքահայ «Թուրքիոյ մէջ ապրող հայ» եւ հնդկահայ «Հնդկաստանի մէջ ապրող հայ» բառերը: Եթե թրքահայ-ի պարագան հասկանալի է, ապա հասկանալի չէ, թե տասնյակ բառերից ինչու է հենց հնդկահայ-ն ընտրվել: Չկան հայահոծ մյուս համայնքների ներկայացուցիչ նշանակող բառերը, ընդհանրական սփիւռքահայ-ը (անգամ արեւմտահայ-ը եւ արեւելահայ-ը):

«Արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների ընդգրկման առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայերենի ուղղագրական բառարանները:

²⁸ Տե՛ս Անդրանիկ վրդ. Կռանյան, Գործնական բառարան հայերէն լեզուի, Բեյրութ, 1970 եւ «Բառգիրք հայերէն լեզուի», Բեյրութ, 1998:

²⁹ Գ. Քերովբեան, Հայերէն բառգիրք աշխարհաբար լեզուի, Ստամբուլ, 2011:

Արտ. Աբեղյանի կազմած ուղղագրական բառարանում³⁰ հանդիպում են ամերիկահայ, եգիպտահայ, լեհահայ, հնդկահայ, պարսկահայ, ռուսահայ, ֆրանսահայ բառերը: Թվում է՝ Աբեղյանը փորձել է միասնական մոտեցում դրսևեւորել. նույն տողի վրա նա տալիս է որեւէ երկրի հիմնական բնակիչ նշանակող, ապա՝ տվյալ երկրում ապրող հայ բառը, ինչպես՝ լեհ, լեհահայ, հնդիկ, հնդկահայ: Սակայն միշտ այդպես չէ. նախ տրվել է եգիպտահայ-ը, ապա՝ եգիպտացի-ն, ռուսահայ-ի կողքին հայտնվել է ռուսա-սեր-ը, իսկ ռուս-ի կողքին՝ ռուսագէտ-ը, առանձին են տրված ֆրանսահայ-ը եւ ֆրանս(ի)ացի-ն, բառացանկում առհասարակ չկա ամերիկացի բառը:

Բառարանում չկան ո՛չ տաճկահայ-ը (թեեւ կան տաճկական, Տաճկահայաստան, տաճկահայերէն), ո՛չ թուրքահայ-ը, թրքահայ-ը եւ ո՛չ էլ թիւրքահայ-ը: Սա թերեւս սկզբունքային մոտեցում է:

«Արտերկրի հայ» նշանակող մի շարք բառեր կան Ա. Ղարիբյանի (եւ գործընկերների) դպրոցական ուղղագրական բառարաններում³¹: Ա. Ղարիբյանի բառարանում գրանցվել են ամերիկահայ, գաղութահայ, հնդկահայ, Ա. Ղարիբյանի եւ Գ. Պարիսի բառարանում՝ իմաստային խմբի միջուկային միավորները՝ գաղութահայ, սփյուռքահայ³², նաեւ ամերիկահայ, հնդկահայ, որոնց Ա. Ղարիբյանի եւ Գ. Շեկյանի բառարանում ավելացել են արխազահայ, անգլիահայ, եգիպտահայ, լեհահայ, պարսկահայ եւ ռումինահայ³³: Հարկ է նշել, որ թվարկվածներից մի քանիսն ուղղագրական դժվարություն չունեն:

Հովհ. Բարսեղյանի բառարանը³⁴ հայերենի նոր ուղղագրությունն արտացոլող ամենածավալուն բառարանն է (ավելի քան 152000 բառ):

³⁰ Արտ. Աբեղյան, Ուղղագրական բառարան, 4-րդ տպագրություն, Շտուտգարտ, 1947:

³¹ Ա. Ղարիբյան, Հայերեն ուղղագրական նոր բառարանը, Երեւան, 1947, Ա. Ղարիբյան, Գ. Պարիս, Դպրոցական ուղղագրական բառարան, Երեւան, 1959, Ա. Ղարիբյան, Գ. Շեկյան, Դպրոցական ուղղագրական բառարան, Երեւան, 1981:

³² Ա. Քոչոյանի «Հայերեն դպրոցական բացատրական բառարանը» (Երեւան, 1966), որ ավելի ուշ է լույս տեսել, սփյուռքահայ չունի: Այն սփյուռք գլխաբառի ներքո տալիս է Սփյուռքի հայեր բառակապակցությունը՝ «թուրքական ջարդարարներից ազատված եւ արտասահմանյան երկրներում ապաստանած հայությունը» բացատրությամբ: Հայաստանյան բացատրական բառարաններից թերեւս միակն է, որ «արտերկրի հայ» իմաստային խմբին պատկանող որեւէ բառ չի արձանագրել:

³³ Տրված են նաեւ որոշ բառերի հավաքականները՝ լեհահայություն, հնդկահայություն, ռումինահայություն, սփյուռքահայություն: Այդպիսիք կարող էին լինել մյուս բառերի դեպքում եւս: Օրինակ, ԱՄՆ-ի հայությունը՝ իբրեւ հավաքականություն, շատ ավելի համախմբված է, հարուստ եւ ազդեցիկ, ամերիկահայություն բառը՝ ավելի գործածական, քան, ասենք, հնդկահայություն-ը, որն այժմ առավելաբար պատմական արժեք ունի, սակայն ամերիկահայություն-ը տրված չէ:

³⁴ Հովհ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Երեւան, 1973:

Այստեղ արձանագրվել են բացատրական բառարաններում գրանցված խնդրո առարկա բոլոր բառերը (բացի թիֆլիսահայ-ից եւ հունահայ-ից. թերեւս Մալխասյանցի բառարանի ազդեցութեամբ), հոմանիշների բառարանի բառամթերքից բացակայում են բուլղարահայ, իրանահայ, դրինահայ, չերքեսահայ, վիրահայ բառերը: Ավելացել է ընդամենը երեք բառ՝ արխազահայ, լիբանանահայ, փարիզահայ³⁵, որ անհրաժեշտ լրացում է: Այդպիսով ընդհանուր թիվը՝ 20 միավոր:

Արխազահայ-ը ներկայացնում է խորհրդային շրջանում ընդունված «ներքին սփյուռքի» հային, սակայն բացակայում է վիրահայ-ը: Ընդգրկվել է փարիզահայ-ը (Փարիզը սփյուռքի մշակութային, գաղափարական կարեւոր կենտրոնն էր), սակայն անտեսվել է ակադեմիական բացատրականում գրանցված թիֆլիսահայ-ը (Թիֆլիսը արեւելահայոց մշակութային-հասարակական-կրթական կարեւոր կենտրոնն էր): Կարող էր լինել զմյուռնահայ-ը (Զմյուռնիայի հայ գաղթօջախը ԺԹ. դարից մինչեւ իր վախճանը Կ. Պոլսից հետո արեւմտահայ երկրորդ խոշոր կենտրոնն էր), որը երկգրութուն ունի (նաեւ զմյուռնիահայ), դրանով էլ առնչվում է այս բառարանի ուղղվածութեանը: Կա լիբանանահայ-ը, անտեսվել է սիրիահայ-ը: Ուղղաբարական դժվարութիւնն ունեն, բայց այստեղ չեն ընդգրկվել ավստրալահայ, ավստրիահայ, բրազիլահայ, եթովպահայ եւ մի շարք այլ բառեր:

Ուսումնական մի բառարանում³⁶ հետազոտվող բառերը տարանջատվել են ըստ ուղղաբարական դեպքերի. ք-ի եւ ւ-ի ուղղաբարութեան բաժիններում գետեղվել են արխազահայ-ը եւ եգիպտահայ-ը, երկհնչյունների բաժնում՝ անգլիահայ-ը: Միայն այսքանը, այնինչ երկհնչյունների ուղղաբարութեանն են առնչվում այլ բառեր եւս:

Ա. Սուբխայանի եւ Ք. Սուբխայանի ուղղաբարական-ձեւակազմական բառարանը³⁷ ուղղաբարական բառարանների մեջ առանձնանում է իր ծավալով (76000 բառ), սակայն «արտերկրի հայ» նշանակող բառերի ընդգրկմամբ զիջում է մյուսներին. արձանագրվել են միայն գաղութահայ, սփյուռքահայ եւ տաճկահայ: Չկան նմանատիպ այլ բառեր, որոնք ուղ-

³⁵ Բառարանի ընդհանուր թերությունն է, որ բառերն սկսվում են մեծատառով (մյուս տառերը՝ փոքրատառ են), ինչպես՝ Արխազահայ, Ամերիկահայ, Անգլիահայ, այդպես էլ Աշխապեղ, Անպարեհ, Ավագ: Սա դեմ է հայերենի ուղղագրությանը, առավել եւս ճիշտ չէ ուղղագրական բառարանի համար:

³⁶ Բ. Սարուխանյան, Ռ. Փիլիպոսյան, Դպրոցականի ուղղագրական-ուղղախոսական թեմատիկ առձեռն բառարան, մաս I-II, Երեւան, 1980:

³⁷ Ա. Սուբխայան, Ք. Սուբխայան, Արդի հայերենի ուղղագրական-ձեւակազմական բառարան, Երեւան, 2002:

ղազրուելու անուամբ ավելի դժվար են, քան, ասենք, գաղութահայ-ը³⁸: Սրանց կողքին չի նշվում, թե ինչպե՛ս է կազմվում նրանց հոգնակին, թեև բառարանը նաև ձևակազմական է:

Անհետևողականությունն է անփութությունն է դրսևորվել «նոր» հորջորջված ուղղագրական բառարանում³⁹: Քննարկվող բառերից այստեղ կան ընդամենը չորսը՝ ամերիկահայ, անգլիահայ, եգիպտահայ եւ թուրքահայ, ընդ որում միայն եգիպտահայ-ի կողքին է նշված հոգնակի վերջավորությունը: Երբ մյուսների հոգնակիակերտ մասնիկը դրված է, ապա բառարանից օգտվողը կարող է ենթադրել, թե ամերիկահայ-ը, օրինակ, միայն ածականի արժեք ունի: Անհասկանալի է, թե ինչու են արձանագրվել հենց այս բառերը, եւ չկան ուղղագրական արժեք ունեցող բազմաթիվ այլ բառեր՝ ավստրալահայ, ավստրիահայ, բրազիլահայ, շվեյցարահայ եւ այլն (ի դեպ, այստեղ էլ բացակայում են արեւմտահայ-ը եւ արեւելահայ-ը):

Ռ. Նազարյանի եւ Ա. Գյողակյանի ուղղագրական դպրոցական բառարանը⁴⁰ նախորդներից զգալապես տարբերվում է «արտերկրի հայ» նշանակող բառերի ընդգրկման անուամբ. այստեղ արձանագրվել է իմաստային խմբի 21 միավոր՝ արխազահայ, ամերիկահայ, անգլիահայ, արգենտինահայ, գաղութահայ, եգիպտահայ, թիֆլիսահայ, թուրքահայ, լեհահայ, լիբանանահայ, կովկասահայ, հնդկահայ, հունահայ, պարսկահայ, պոլսահայ, ռումինահայ, ռուսահայ, սիլոնոքահայ, տաճկահայ, փարսիզահայ, ֆրանսահայ: Այս բառերի միջոցով կարելի է ընդհանուր (թեպետ ոչ ամբողջական) գաղափար կազմել սփյուռքի տարբեր գաղութների մասին: Դուրս են մնացել մինչ այդ տարբեր բառարաններում հանդիպող բուլղարահայ, եթովպահայ, հունգարահայ, սիրիահայ, վիրահայ բառերը, չկան առաջին անգամ արձանագրվածներ:

Վ. Սահակյանի կազմած ուղղագրական բառարանում⁴¹ գրանցվել են միջուկային միավորներ գաղութահայ-ը եւ սիլոնոքահայ-ը: Եթե միայն սրանք լինեին, կկարծեինք, թե սկզբունքային (եւ ընդունելի) մոտեցում է կիրառվել: Սակայն տեղ է գտել նաև պարսկահայ-ը, քննարկվող բառախմբից միայն սա: Ընդ որում բառարանում չկան նաև արեւելահայ-ը

³⁸ Բառարանում չկան անգամ արեւմտահայ-ը եւ արեւելահայ-ը, որոնք հայերենի բառապաշարի մեջ կարելի էր տեղ են զբաղեցնում, միաժամանակ ուղղագրական արժեք ունեն:

³⁹ Փ. Մեյթիխանյան, Հայերենի ուղղագրական նոր բառարան, Երեւան, 2002:

⁴⁰ Ռ. Նազարյան, Ա. Գյողակյան, Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան, Երեւան, 2004:

⁴¹ Վ. Սահակյան, Դպրոցական ուղղագրական բառարան, Երեւան, 2005:

եւ արեւմտահայ-ը⁴², որ նշանակում է՝ կազմողն անհետեւողական է եղել:

Դ. Գյուրջինյանի կազմած ուղղադրական մասնավոր բառարանում գրանցվել են լուսանջելեսահայ, նյույորքահայ բառերը, որոնք անջատ, անանջատ կամ գծիկով գրելու դժվարություն ունեն⁴³: Սա քաղաքանուններից բաղադրված այս բառերի բառարանային առաջին (առայժմ նաեւ միակ) արձանագրումն է:

«Արտերկրի Հայ» իմաստային խմբի միավորներն արձանագրելու առաջատարը (40 բառ) Մարտիրոս Մինասյանի կազմած Հայերենի ավանդական ուղղադրության բառարանն⁴⁴ է՝ իր տեսակի մեջ ամենածավալունը: Այստեղ ընդգրկված են՝

ա) մինչ այդ լույս տեսած Հայերեն միալեզվյան եւ թարգմանական բառարաններում հանդիպող բառերը՝ արխազահայ⁴⁵, ամերիկահայ, անգլիահայ, արգենտինահայ, գաղթահայ/գաղութահայ, եգիպտահայ, եթովպահայ, թիւրքահայ/թուրքահայ/թրքահայ, թիֆլիսահայ, իտալահայ⁴⁶, իրանահայ, լեհահայ, լիբանանահայ, կովկասահայ, հնդկահայ, հունգարահայ, յունահայ, չեքեզահայ, պարսկահայ, պոլահայ (նաեւ պոլսեցի), պուկարահայ, ռուսահայ, ռումինահայ/ռումինահայ, սիրիահայ, սիւրբահայ, վիրահայ(ոց), փաճկահայ, փարիզահայ, ֆրանսահայ, ընդամենը 34, որոնցից չորսը տարբերակային ձեւեր են,

բ) Հայերեն բառարաններում մինչ այդ չարձանագրված բառեր՝ իսրայէլահայ, կանադահայ, կիպրահայ, հոլանդահայ, շուեդահայ⁴⁷, ուրուգուայահայ⁴⁸, պէրուսահայ, ընդամենը 7 միավոր: Սա կարելու համարում է:

Այսպիսով, Մ. Մինասյանի բառարանը բավական տեսանելի ուրվագծում է սփյուռքի «բառային պատկերը»:

⁴² Արեւելահայ եւ արեւմտահայ բառերի՝ բառարաններում կրկնվող այս պատկերը հուշում է, որ հեղինակները հաճախ ինքնուրույն մոտեցումներ չեն դրսևորում, երբեմն ուղղակի կրկնում են իրար:

⁴³ **Դ. Գյուրջինյան**, Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր, 6-րդ հրատ., Երեւան, 2008: Բառգրքայի առաջին հրատարակության մեջ (1998) այս բառերը բացակայում են:

⁴⁴ **Մ. Մինասեան**, Հայերէն ասանդական ուղղագրութեան բառարան, Ժնեւ, 2000 (տպվել է ընդամենը 25 օրինակ):

⁴⁵ Բառարանում առանձին տրվում է նաեւ *ափխազ* տարբերակը, եւ սեղմ հուշում, որ նա ունի նույն բաղադրությունները, ինչ *արխազ*-ը:

⁴⁶ Իտալահայ-ը գլխաբառ է դարձել արեւմտահայերենի հայտնի բառարաններից մեկում՝ **Մ. Գույումճեան**, Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Կահիրե, 1950:

⁴⁷ Սփյուռքահայ մամուլում, տարբեր կայքերում հանդիպում է հիմնականում է-ով՝ շուէ-դահայ/շուէտահայ:

⁴⁸ Արեւելահայերենում ընդունված է ուրուգվահայ: Օրինակ՝ «Ուրուգվահայ համայնքի մշակութային կյանքն սկսել է ծեւավորվել 1930-ական թթ.» («Հայ սփյուռք» հանրագիտարան, Երեւան, 2003, էջ 615):

Չնայած մեծ ընդգրկմանը, այս բառարանից եւս բացակայում են երկրանուններից հայ վերջնաբաղադրիչով կազմված մի շարք բառեր, որոնք անվանում են սփյուռքի հայաշատ համայնքների ներկայացուցիչների, ինչպես՝ աստրալահայ, աստրիահայ, բրազիլահայ/պրազիլահայ, գերմանահայ, իրաքահայ, յորդանանահայ, շուեյցարահայ/գուիցերահայ եւ այլն: Ի դեպ, դրանցից մի քանիսը նաեւ ուղղագրական դժվարություն ունեն, ուստի դրանց ներառումը օգտակար կլիներ:

Ընդգրկված բառանյութը հուշում է, որ կազմողը հաճախ գետեղել է միեւնույն բառի թե՛ արեւելահայ եւ թե՛ արեւմտահայ տարբերակները (հմտ. սպանացի – իսպանացի): Սակայն միշտ այդպես չէ: Բառարանում, օրինակ, կան արեւմտահայերեն պուլկարահայ-ը եւ պուլկարահայուհի-ն, բայց չկա արեւելահայերեն բուլղարահայ-ը (թեպետ տրված են՝ բուլգար, բուլգարացի, բուլղար, բուլղար(ա)ցի), կա պէյրութահայ-ը, չկա քէյրութահայ-ը: Եվ հակառակը՝ կան արեւելահայերեն արգենտինահայ, կանադահայ, հոլանդահայ, շուեյցարահայ, սիրիահայ, սակայն չկան դրանց արեւմտահայերեն արժանաթինահայ, գանադահայ, հոլանդահայ, շուեյցարահայ, սուրիահայ տարբերակները:

«Արտերկրի հայ» նշանակող բառերի կողքին սովորաբար տրվում են ոչ միայն նրանց հավաքականները, այլեւ իզական սեռի ներկայացուցիչների անունները, ինչպես՝ եգիպտահայուհի, եթովպահայուհի, յունահայուհի, շուեյցարահայուհի, փարիզահայուհի: Սրանք չինծու ձեւեր են, հայերեն գրավոր եւ բանավոր խոսքում որպես կանոն չեն հանդիպում⁴⁹: Մյուս կողմից էլ, սակայն, ասենք, որ արխագահայ-ի, ամերիկահայ-ի, թիֆլիսահայ-ի եւ չերքեզահայ-ի դեպքում դրանք չեն տրվում: Այս փաստը նշում ենք միայն համակարգայնության խախտումը մատնանշելու նպատակով:

Լեհահայ-ից եւ պարսկահայ-ից հետո տրվում են լեհահայոց եւ պարսկահայոց հոգնակի սեռականի ձեւերը, սակայն փաճկահայ, թրքահայ կամ ռուսահայ բառերից հետո՝ ոչ, թեեւ փաճկահայոց, թրքահայոց կամ ռուսահայոց ձեւերը բավական հաճախական են եղել (մասամբ են): Իսկ արձանագրված վիրահայոց բառաձեւի հիմքը՝ վիրահայ-ը թերեւս վրիպմամբ մոռացվել է (բայց կան վիրահայություն-ը եւ վիրահայուհի-ն):

Հայաստանի ԳԱ եւ ԵՊՀ հաշվողական կենտրոնի ստեղծած հանգաբառարանը⁵⁰ քննարկված բառարաններից տարբերվում է. այստեղ բառերը դասավորված են թեպետ այբբենական կարգով, սակայն հակադարձ եղանակով՝ ըստ բառի վերջի՝ աջից ձախ: Մեզ հետաքրքրող բառերը

⁴⁹ Մեկական գործածությամբ վկայվել են ռուսահայուհի եւ ֆրանսահայուհի բառերը:

⁵⁰ Հայոց լեզվի հանգաբառարան, Երեւան, 1976:

16-ն են եւ խմբավորված են մեկ տեղում՝ ըստ հայ վերջնաբաղադրիչի (էջ 300): Բացատրական եւ Հովհ. Բարսեղյանի բառարանների նյութին ավելացել է քանիցս հիշատակված սիրիահայ բառը, որը կարեւոր լրացում է, սակայն, ցավոք, միակը: Դուրս են մնացել հիշյալ բառարաններում գրանցված մի շարք բառեր՝ անգլիահայ, թիֆլիսահայ, հունահայ, հունգարահայ, ռումինահայ, տաճկահայ:

Բ. Ղազարյանի հաճախականություն բառարանի⁵¹ նվազող հաճախականություն բառերի ցանկում «արտերկրի հայ» նշանակող ոչ մի բառ չկա, 2-1 հաճախականություն ունեցող բառերի ցանկում գետեղվել են՝ գաղթահայ, թուրքահայ/թյուրքահայ, պարսկահայ, ֆրանսահայ (էջ 307, 318, 317, 287, 294), բայց չկան ամերիկահայ, ռումինահայ եւ հաճախագեպ այլ բառեր: Սա կասկածի տակ է դնում բառարանի տվյալները: Ինչպե՞ս կարող են լինել սիյուրքահայերեն եւ սիյուրքահայություն բառերը (էջ 357), սակայն չլինի սիյուրքահայ-ը, կա տաճկահայ-ը (էջ 360), չկա տաճկահայ-ը, չկան եգիպտահայ, լեհահայ կամ պոլահայ, բայց կան այս կարգի բազմաթիվ բառեր՝ նախորոհի, վարդարուֆյա, գյոթեական, կարարդիկա, մոմիկայնություն: Սա վկայում է, որ մեզ հետաքրքրող բառերի առումով հաճախականություն բառարանը օգտակար չի կարող լինել բառարանագիրներին:

Պատմական եւ հասարակական-քաղաքական հաճախ անսպասելի զարգացումների հետեւանքով հայկական սփյուռքի պատկերն անընդհատ փոփոխվում է, որի հետեւանքով էլ նոր համայնքների ներկայացուցիչ նշանակող բառեր են կազմվում, ուստի դրանք երբեմն հայտնվում են նոր բառերի բառարաններում:

Ս. Էլոյանի «Արգի հայերենի նորաբանությունների բառարանում»⁵² արձանագրվել է «արտերկրի հայ» իմաստային խմբի 9 միավոր, որոնք չեն հանդիպում նախորդ բառարաններում: Դրանք կազմվել են երկրանուններից՝ գերմանահայ, շվեյցարահայ, քաղաքանուններից՝ բուսրոնահայ, ժնեպահայ, մոսկվահայ, սադիմահայ, սրամբուլահայ, օրենքուրգահայ⁵³: Բացառություն է եվրոպահայ-ը, որի առաջին բաղադրիչը տարածական ավելի լայն ընդգրկում ունի. աշխարհամասի անուն է: Սա բառակազմի կարեւոր համալրում է:

Բառարանագիրն այս կարգի բառերի ամբողջական ներկայացման

⁵¹ Բ. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Երեւան, 1982:

⁵² Ս. Էլոյան, Արգի հայերենի նորաբանությունների բառարան, Երեւան, 2002:

⁵³ Արձանագրված է նաեւ պետերբուրգահայություն հավաքականը, սակայն չկա պետերբուրգահայ-ը:

խնդիրը չի ունեցել. արձանագրել է այն, ինչ իրեն պատահել է հատկապես մամուլի լեզվում. Դրանով է բացատրվում որոշ նորակազմ բառերի բացակայությունը:

Բառարանի սկզբունքը բառերը բնագրային օրինակներով ներկայացնելն է: Թերեւս այդ պատճառով բնագրային մեկ օրինակի հիման վրա վերոհիշյալ բառերը գոյականներ են դիտվել: Միայն բոսպորանահայ «Բոստոնում ապրող հայ» բառն է երկարժեք (գոյ., ած.) համարվել. «Բոսպորանահայ Ա. Ղարաբեկյանը Հայաստանի կամերային նվագախմբի ղեկավար» («Մոլորակ», 9.04.94), այնինչ համանման ժնեստայ-ը՝ գոյական. «Ծրագրի հեղինակը ժնեստայ լրագրող Վ. Չիթերյանն է» («Հայաստանի Հանրապետություն», 21.10.91): Այդպես էլ «Վ. Օսկանյանը հանդիպեց գերմանահայ համայնքի ներկայացուցիչների հետ» (նույն թերթը, 7.05.98) բնագրային նմուշի հիման վրա գերմանահայ «Գերմանիայում բնակվող հայ» բառը գոյական է համարվել, ոչ թե ածական:

Սաղիմահայ-ը բացատրվել է «Երուսաղեմի Սաղիմ բնակավայրում ապրող» (էջ 413), այնինչ Սաղեմը հենց Երուսաղեմն է⁵⁴ (վերջին ձայնավորը հնչյունափոխվել է), ուստի հարկ էր ուղղակի ասել՝ «Երուսաղեմում ապրող հայ»: Նշենք, որ սաղիմահայ-ը նորաբանություն չէ, այլ բառարաններում չարձանագրված բառ: Հմմտ. «Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածնից հայրական ողջույններն է փանտում Երուսաղեմի հայոց պարբիարքության, ամենապատիվ սրբազան պարբիարք հոր եւ սաղիմահայ գաղութին» («Էջմիածին», 1963, ԺԱ., էջ 3):

Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցների կազմած նոր բառերի գրքույկում⁵⁵ գրանցվել են բաղդադահայ, իրաքահայ եւ ուկրաինահայ բառերը, բոլորն էլ գոյականի արժեքով, համանման բացատրությամբ՝ «Բաղդադում/Իրաքում/Ուկրաինայում ապրող/բնակվող հայ», մամուլից քաղված օրինակներով: Կազմողները նոր են համարել այն բառերը, որոնք գրանցված չեն իրենց համար համեմատության եզր դարձած յոթ բառարաններում: Սա ճիշտ մոտեցում չէ, քանի որ բառը կարող է վաղուց ի վեր գոյություն ունեցած լինել, բայց բառարանում երբեւէ արձանագրված չլինել: Այդ դեպքում այն ինչպե՞ս կարող է նոր համարվել: Օրինակ՝ իրաքահայ, որի ածականի եւ գոյականի արժեքներով գործածություններ կարող ենք բերել հիսուն տարի առաջ հրատարակ-

⁵⁴ Սաղեմ-ը Երուսաղեմի հին անունն է (Ծննդ. ԺԴ. 18, Եբր. Է. 1,2), նույն անունը հետագայում այլաբանորեն էր տրվում Երուսաղեմին (Սաղմ. ՀՁ. 2) (տես «Բառարան Սուրբ Գրոց», Կ. Պոլիս, 1881, էջ 475):

⁵⁵ Տես «Նոր բառեր», Ա. պրակ (կազմողներ՝ Ա. Գալստյան եւ ուրիշներ), Երեւան, 2015:

ված պատմագիտական հայտնի գրքից. «Հին և միջնադարյան իրաքսիայ մշակույթից աննշան բեկորներ են հասել մեզ», «Իրաքսիայերը դպրոցների վրա նայել են ոչ միայն մի հասարակության, որը պարտավորություն ունի կրթելու, դաստիարակելու մարտղ սերնդին...» (Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Հ. Բ, Երեւան, 1967, էջ 51, 52) եւ այլն, հանրագիտարանից. «Իրաքում գործում է 2 հայկական եկեղեցի (Բաղդադում եւ Բասրայում), իրաքսիայ թեմը էջմիածնական է» (Հայկական սովետական հանրագիտարան, Հ. 4, Երեւան, 1978, էջ 462) եւ այլն: Ուստի ճիշտ կլինի նման բառերը ոչ թե նոր համարել, այլ բառարաններում չգրանցված կամ չարձանագրված, իսկ բառերի նոր՝ նորակազմ լինելը որոշելու համար, անշուշտ, պետք է ընդլայնել որոնման դաշտն ու համեմատվող բառարանների (նաեւ արեւմտահայերեն) շրջանակը:

«Արտերկրի հայ» նշանակող հատուկենտ բառեր հանդիպում են հայերենի տարատեսակ այլ բառարաններում: Անգլերադառնանք դրանց:

Ռ. Նավոյանի կազմած բառարանն⁵⁶ ընդգրկում է ԺԹ. դարի 50-80-ականների նորակազմությունները եւ մասամբ պատմական բառարանի նշանակություն ունի: Կազմողը փորձել է պարզել նորակազմ յուրաքանչյուր բառի առաջին գործածությունը. նշել է տարեթիվը, բերել բնագրային օրինակներ: Ընդգրկված են հայություն երեք ստվար հատվածների ներկայացուցիչներին անվանող թրքահայ-ը, պարսկահայ-ը եւ ռուսահայ-ը, ընդ որում առաջինը գլխաբառ է դարձել թրքահայ (ոց) ձեւով եւ «արեւմտահայ» իմաստով (օրինակը Ս. Տյուսաբից է, 1884 թ.), երրորդը ներկայացվել է ռուսահայ արտասանություն բառակապակցությւնով՝ «Ռուսաստանում ապրող հայերին հատուկ խոսեւածեւ» (Արփ. Արփիարյան, 1886 թ.): Զուտ «արտերկրի հայ» նշանակող միակ միավորը պարսկահայ-ն է, որ բացատրվել է «Պարսկաստանի հայ».: «Բայց պարսկահայք մնացին րգիտության մահահրավեր խավարի մեջ» (Բաֆֆի, 1867 թ.):

Կարող ենք ճշգրտումներ անել ինչպես բառի խոսքիմասային արժեքի, այնպես էլ բառի ստեղծման ժամանակի առումով: Հմտ. «Բոլոր թեմերից յեւր մնացածն է Երեւանի թեմը, որի քնակիչը կազմում է կէսը ռուսահայերի թուի» («Պսակ», 24.05.1880) կամ «Եթէ կարելի լինէր բոլոր ռուսահայերին հավաքել մի տեղ...» («Մշակ», 04.04.1884)⁵⁷: Սրանք «Ռուսաստանում

⁵⁶ Ռ. Բ. Նավոյան, Ակնարկներ 19-րդ դարի 50-80-ական թթ. աշխարհաբարյան նորակազմությունների ուսումնասիրության բառարան, Երեւան, 2011:

⁵⁷ Տե՛ս Դ. Գյուրջինյան, Ռուսահայ բառի բառարանագրական քննությունը/Գիտական հոդվածների ժողովածու (նվիրվում է Հր. Աճառյանի ծննդյան 140-ամյակին), Երեւան,

ապրող հայ, ռուսահայատակ հայ» իմաստով գոյականի ավելի վաղ գործածություններ են:

Ա. Պապոյանի կազմած հեղինակային (գրողի լեզվի) բառարանում⁵⁸ գրանցվել են թիֆլիսահայ-ը, պարսկահայ-ը եւ ռուսահայ-ը: Բառարանային մշակման համար ելակետային է գրողի լեզվի ընձեռած նյութը:

Թիֆլիսահայ-ը նշվել է ածականի արժեքով, երկու իմաստով՝ «Թիֆլիսաբնակ հայ» («Սայաթ-Նովա» մենագրությունից քաղված «Ինձ խանգարել է ... թիֆլիսահայ չլինելս» օրինակի հիման վրա) եւ «Թիֆլիսում բնակվող հայերին հատուկ»։ «Թիֆլիսահայ բարբառ» (նույն աշխատությունից): Այս վերջին ձևակերպումն ավելի նպատակահարմար է, քան ակադեմիական բացատրականում տրվածը՝ «Թիֆլիսի հայկական»:

Պարսկահայ-ը եւ ռուսահայ-ը նույնպես ներկայացվել են որպես ածականներ՝ «Պարսկաստանի հայ, իրանահայ» եւ «Ռուսաստանում ապրող հայերին վերաբերող, ռուսահայերի», մեկական գործածությամբ. «Բավարարվենք հիշելով քաջախմուր, պարսկահայ Բաֆֆուն» եւ «Քանի լուսավոր գլուխներ են տվել ռուսահայ այդ գաղութները»:

Ռ. Սաքապետոյանի արեւմտահայերեն-արեւելահայերեն բառարանում⁵⁹, որը ներկայացնում է արեւմտահայերենի ուղղախոսական եւ բառային տարբերությունները արեւելահայերենի համեմատ, զետեղվել է հետազոտվող բառերից միայն մեկը՝ ռումանահայ: Եթե այս մեկը կա, ուրեմն պետք է լինեին նաեւ արժանթիսահայ, զուիցերահայ, պուլկարահայ, պրագիլահայ, սուրիահայ եւ նման այլ բառեր⁶⁰, որոնց արեւելահայերեն համարժեքները նկատելիորեն տարբեր են՝ արգենտինահայ, շվեյցարահայ, բուլղարահայ, սիրիահայ:

Դ. Գյուրջինյանի կազմած քերականական բառարան-տեղեկատուում⁶¹ ներկայացված են սփյուռքի տարբեր համայնքների ներկայացուցիչ նշանակող տասնյակից ավելի բառեր՝ ամերիկահայ, անգլիահայ,

2016, էջ 81-95:

⁵⁸ Արտ. Հ. Պապոյան, Պարույր Սեւակի աշխատությունների եւ թարգմանությունների բառարան, Երեւան, 1986:

⁵⁹ Ռ. Սաքապետոյան, Արեւմտահայերեն-արեւելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Երեւան, 2000:

⁶⁰ Ակնհայտ է բառընտրության անհետեւողականությունը: Եթե բառարանում կան, օրինակ, հոլանդաբնակ, հոլանդացի, հոլանդերէն կամ զուիցերական, զուիցերացի, ապա պիտի լինեին նաեւ գանադացի, պուլկարացի, պուլկարերէն, պրագիլացի, սուրիացի եւ այլն:

⁶¹ Դ. Գյուրջինյան, Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու, Երեւան, 2007:

եզիպարահայ, թուրքահայ, լիբանանահայ, կուվկասահայ, հնդկահայ, պարսկահայ, պոլսահայ, ռուսահայ, փաճկահայ, վիրահայ: Յուրաքանչյուրի կողքին նշվում է հոգնակիի -եր մասնիկը: Թեև բառարանի ընդգրկումը մեծ է (8000 միավոր), այնուամենայնիվ սիրիահայ, սիյուրքահայ, ֆրանսահայ բառերը դուրս չպիտի մնային:

Բառակազմական դպրոցական բառարանում⁶² զետեղվել են իմաստային խմբի միայն ընդհանրական անունները՝ գաղութահայ եւ սիյուրքահայ: Նշվել է վերջինիս հավաքական գոյականը սիյուրքահայություն-ը, իսկ գաղութահայություն-ը բացակայում է⁶³:

Այժմ պարզենք, թե իմաստային խմբի ո՛ր բառերն են առավել հաճախ հանդիպում հայերեն միալեզվյան բառարաններում: Բառարանային ամենաշատ գրանցում ունի գաղթահայ/գաղութահայ-ը, որն իմաստային խմբի միջուկային անդամներից է, ընդհանուր անուն: Այն տեսնում ենք 17 բառարանում: Այդպիսին է նաեւ համանման հատկանիշներ ունեցող սիյուրքահայ-ը:

Այնուհետեւ թ(ու)րքահայ եւ փաճկահայ հոմանիշներն են: Բացատրվում է նրանով, որ սրանք միաժամանակ անվանում են հայության մի ստվար հատվածի ներկայացուցիչներին՝ նշանակելով «արեւմտահայ»: Հաճախականների մեջ է ռուսահայ-ը, որը խորհրդային ժամանակաշրջանում գործածությունից գրեթե դուրս էր մղվել, սակայն «արեւելահայ» նշանակությունը նրա գործածականություն կարեւոր հիմքերից մեկն է:

Հաջորդ տեղերը զբաղեցնում են եզիպարահայ-ը եւ հնդկահայ-ը, որոնք նախասփյուռքյան շրջանի բառեր են, այսինքն՝ բառային ավելի երկար պատմություն ունեն (որ բխում է համայնքի երկարատեւ պատմությունից): Միաժամանակ դեր է խաղացել բառարանագրական ավանդույթը: Սրանց նման է, գրեթե նույն հատկանիշներն ունի լեւահայ-ը:

Ինքնին հասկանալի է պարսկահայ-ի առկայությունն այս ցանկում. հայրենիքին մոտ գտնվող կենսունակ եւ մարդաշատ այս համայնքի ներկայացուցչին անվանող բառն այնքան արմատացած է հայության լեզվամտածողության մեջ, որ իր տեղը «ամենեւին չի զիջում» հոմանիշ իրանահայ-ին: Միալեզվյան բառարաններում հաճախագեպ է ամերիկահայ-ը, որ հայկական ամենամեծ եւ ազդեցիկ համայնքի ներկայացուցիչ նշանակող բառն է:

⁶² Հմմտ. Ս. Գալստյան, Դպրոցական բառակազմական բառարան, Երեւան, 2011:

⁶³ Այս բառարանում կա արեւմտահայ-ը, չկան արեւելահայ-ը եւ նրանից բաղադրված արեւելահայերեն-ը:

Ցանկում են նաեւ կովկասահայ, ռումինահայ, ֆրանսահայ, անգլիահայ բառերը: Եթե առաջին երեքի բառարանային հաճախագեղությունը հիմնավորելի է, ապա անգլիահայ-ի պարագայում դա դժվար է անել (կամ անհնարին է): Համեմատության համար ասենք, որ լիբանանահայ-ը, օրինակ, հանդիպում է հինգ բառարանում, հունահայ-ը՝ չորսում, վիրահայ-ը՝ երեքում, իսկ սիրիահայ-ը՝ ընդամենը երկուսում:

Քաղաքանուններից բաղադրված բառերի ենթախմբում հաճախակիությունը առանձնանում են պոլսահայ-ը (5 անգամ), թիֆլիսահայ-ը (4 անգամ) եւ փարիզահայ-ը (3 անգամ): Սրանց առաջին բաղադրիչները հայ մշակույթի, հասարակական-քաղաքական եւ մտավոր կյանքի նշանավոր կենտրոնների անուններ են:

Իմաստային խմբի միավորներից 17-ը բառարաններում գրանցվել է միայն մեկ անգամ: Դրանք են՝ երկրանուններից բաղադրված գերմանահայ, իսրայելահայ, իրաքահայ, կանադահայ, կիպրահայ, շվեդահայ, շվեյցարահայ, ուկրաինահայ եւ քաղաքանուններից բաղադրված Ժնևահայ, լոսանջելեսահայ, մոսկվահայ, նյույորքահայ, պեյրոթահայ եւ այլն:

Այսպիսով՝ հայերեն միալեզվյան բանասիրական բառարաններում «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորներից արձանագրվել են 51-ը (տարբերակները չհաշված)՝ արխազահայ, ամերիկահայ, անգլիահայ, արգենտինահայ, բաղդադահայ, բուսրոնահայ, բուլղարահայ/պուլկարահայ, գաղութահայ/գաղթահայ, գերմանահայ, եգիպտահայ, եթովպահայ, եմրուպահայ, թիրքահայ/թրքահայ/թուրքահայ, թիֆլիսահայ, Ժնևահայ, իսրայելահայ, իրալահայ, իրանահայ, իրաքահայ, լեհահայ, լիբանանահայ, լոսանջելեսահայ, կանադահայ, կիպրահայ, կովկասահայ, հնդկահայ, հոլանդահայ, հունահայ/յունահայ, հունգարահայ, դրինահայ⁶⁴, մոսկվահայ, շվեդահայ, շվեյցարահայ, նյույորքահայ, չեքեզահայ, պարսկահայ, պեյրոթահայ, պոլսահայ, ռումինահայ/ռումանահայ, ռուսահայ, սադիմահայ, սիրիահայ, սրաւմբուլահայ, սփյուռքահայ, վիրահայ, փաճկահայ, ուկրաինահայ, ուրուգուայահայ, փարիզահայ, օրենբուրգահայ, ֆրանսահայ⁶⁵:

Նույնիսկ միասնական այս ցանկի միջոցով հնարավոր չէ քիչ թե շատ հստակ ուրվագծել հայկական սփյուռքի իրական պատկերը: Առանձին բառարանների շրջանակներում այդ պատկերն անգամ ամբողջովին աղճատված է: Բառացանկերից դուրս են մնացել տասնյակ բառեր, որոնք

⁶⁴ Միայն այս բառը, ի տարբերություն մյուսների, գլխաբառ չի դարձել:

⁶⁵ Դ. Գյուրջինյան, «Արտերկրի հայ» իմաստային խմբի բառերի ներկայացումը հայերենի թարգմանական բառարաններում, ԲԵՀ. Հայագիտություն, 2017, թ. 2, էջ 59-77:

անվանում են սփյուռքի հին, բազմամարդե եւ հայության կյանքում կարեւոր դերակատարում ունեցած (եւ ունեցող) ինչպես հին, այնպես էլ վերջերս ձեւավորված համայնքների ներկայացուցիչների՝ ավսրապահայ, ավսրախահայ, բելգիահայ, բրազիլահայ, դանիահայ, զմյուռնահայ, մոլդովահայ եւ այլն: Բառացանկերը համալրելու հարցում կարող են օգտակար լինել թարգմանական բառարանները:

Այսպիսով՝ հանգում ենք հետեւյալ եզրակացություններին:

1. Հայերեն միալեզվյան բառարաններում «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների արձանագրումն սկզբնավորվել է Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում». այստեղ գլխաբառ է դարձել 10 բառ: Այս բառարանի մոտեցումները մեծապես ազդել են արեւելահայերենի եւ արեւմտահայերենի հետագա բառարանների վրա:

2. Իմաստային խմբի 51 միավոր արձանագրվել է հայերեն բացատրական, ուղղագրական, ուղղախոսական, հոմանիշների, հակադարձ, հաճախականություն, նորաբանությունների, նորակազմությունների, գրողի լեզվի, բառակազմական եւ քերականական բառարաններում: Հին եւ նորակազմ բազմաթիվ բառեր տակավին բառարանագրված չեն:

3. Իմաստային խմբի բոլոր միավորներն ունեն հայ վերջնաբաղադրիչը: Գաղ(ու)թահայ եւ սփյուռքահայ ընդհանրական անուններից բացի մյուսները կազմվել են հետեւյալ մասնակաղապարներով՝ գերազանցապես «երկրանուն+հայ» կամ «տարածաշրջանի անուն+հայ», ապա՝ «քաղաքանուն+հայ», մեկ միավոր՝ «աշխարհամասի անուն+հայ»:

4. Բառարաններում առավել հաճախ գրանցվել են գաղ(ու)թահայ, սփյուռքահայ, եգիպտահայ, հնդկահայ, լեհահայ, պարսկահայ, ամերիկահայ բառերը, նաեւ փաճկահայ, թ(ու)րքահայ եւ ռուսահայ (սրանք հետազոտվող խմբին են առնչվում միայն «Թուրքիայի հայ» եւ «Ռուսաստանի հայ» իմաստներով, բայց հաճախադեպ են առավելապես «արեւմտահայ» եւ «արեւելահայ» իմաստների շնորհիվ): Իմաստային խմբի 17 միավոր միայն մեկ անգամ է գրանցվել միալեզվյան բառարաններում:

5. Իմաստային խմբի միավորները բառարաններում համարվել են ձեւաբանորեն երկարժեք կամ միարժեք, ներկայացվել որպես մենիմաստ եւ բազմիմաստ (մինչեւ չորս իմաստ, թեեւ չարդարացված), տրվել են հոգնակի ուղղականի եւ սեռականի վերջավորությունները, նկատվել են տարբերակներ, հազվադեպ՝ մատնանշվել հոմանիշ եւ հականիշ բառերը, գրանցվել են ավանդական եւ նոր ուղղագրություններ: Հաճախ բառարանային մշակումն իրականացվել է ոչ միասնական մոտեցմամբ:

6. Հայերենի մի շարք բառարաններում կատարվել է «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների անսկզբունք ընտրություն: Բառընտրություն կատարելիս պետք է հաշվի առնել լեզվական եւ արտալեզվական գործոնները (հայ սփյուռքի հարափոփոխ վիճակը, բառերի գործածականությունից իրական պատկերը եւ այլն):

7. Հայերենի նոր բառարաններում անհրաժեշտ է համակարգված մոտեցում ցուցաբերել «արտերկրի հայ» իմաստային խմբի միավորների նկատմամբ:

РЕЗЮМЕ

Лексические единицы семантической группы «зарубежный армянин/армянин диаспоры» означают «представитель той или иной армянской общины (страны или города)»: Ամերիկահայ – армянин из США, եգիպտահայ – армянин из Египта, ւրլահայ – армянин из Константинополя и т.д.

51 единица исследуемой семантической группы включена в различные одноязычные словари армянского языка: толковый (восточноармянского и западноармянского), орфографический, орфоэпический, синонимов, неологизмов, словообразовательный, обратный, частотный, авторский и грамматический. В статье исследуется лексикографическая обработка этих слов.

Десятки образований семантической группы «зарубежный армянин/армянин диаспоры» еще не отражены в словарях армянского языка.

SUMMARY

The lexical units of the semantic group “foreign Armenian / Diasporan Armenian” mean “a representative of any Armenian community (of a country or a city)”: Ամերիկահայ – American Armenian, Armenian who lives in the USA, եգիպտահայ – Egyptian Armenian, ւրլահայ – Armenian from Constantinople, etc.

51 units of the semantic group under study are included in various monolingual dictionaries of the Armenian language: explanatory (of the Eastern and Western Armenian languages), orthographical and orthoepic dictionaries; dictionaries on synonyms, neologisms, word-formations, word lists by frequency, as well as reverse, authorial and grammatical dictionaries. The lexicographic treatment of these words is studied in the article.

Dozens of formations of the semantic group “foreign Armenian / Diasporan Armenian” have not yet been reflected in the dictionaries of the Armenian language.

